№ 258 ՈՒՐԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24

1906

ՈՒՐԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24 № 258

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն, ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՅ 1907 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Արշակ Գրիգորեան Իզմիրեանց, Մարիա Գրիգորիեվնա Կորշ, Մարգարիտ Գրիգորեան Իզմիրեանց, Սօֆիա Եսայեան Իզմիրեանց և Պետր Պետրովիչ Կորշ սրտի վշտով յայտնում են ծանօթներին և ազգականներին առաջինների թանկագին և անմոռանալի մօր, միւսների սկեսրօջ և զոքանչի

**Սօֆիա Միքայէլեան Իզմիրեանցի**

յանկարծահաս մահվան մասին, որ տեղի է ունեցել նոյեմբերի լոյս 20-ի գիշերը՝ Ամբիծը ուրբաթ 24-ին և շաբաթ 25-ին նոյեմբերի, երեկոյեան ժամի 6-ին հանգուցեալի բնակարանում Գրիբօեդօվսկայա փողոց, տուն № 24։ Թաղման մասին կը յայտարարվի առանձին։ (ե. հ. ու.) 3—3

Իշխանուհի Եղիսաբէթ Սողոմոնեան Արղութեան Երկայնաբազուկ և Գէորգ Յովսէփեան Փարուխեանը իր որդկերանցով յայտնում են ազգականներին և բարեկամներին, առաջինը թանկագին և անմոռանալի մօր՝ երկրորդը՝ քրոջ, իսկ վերջինները սիրելի հօրաքրոջ՝

**ԿԱՏԱՐԻՆԷ ՅՈՎՍԷՓԵԱՆ ՄԵՀՐԱԲԵԱՆՑԻ**

մահը, որ տեղի ունեցաւ նոյեմբերի 17-ին։ Հոգեհանգիստը կը լինի հինգշաբթի և ուրբաթ երեկոյեան ժամը 6-ին, իսկ յուղարկաւորութիւնը շաբաթ, նոյեմբերի 25-ին, առաւօտեան ժամը 10-ին, իր բնակարանից (Բեհբութեան փողոց, № 32 սեփական տուն) դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ հ. ու. 2—2

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԴԵՐԱՍԱՆ

**ԳԷՈՐԳ ՅՈՎՍԷՓԵԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ**

այրի տ. Սաթենիկ Մկրտչեան Պետրոսեանը, իր զաւակների հետ, անկարող լինելով մի առ մի պատասխանել իրան ուղղած բոլոր ցաւակցութիւններին, յայտնում է խորին շնորհակալութիւն Թիֆլիսի, Նոր-Նախիջևանի և այլ տեղերի հայ հասարակութեան, Թիֆլիսի, Նոր-Նախիջևանի Հայոց Դրամատիկական ընկերութիւններին, հայ, ռուս և վրացի ընկեր դերասաններին, խմբագրութիւններին, հոգևորականներին, Ներսիսեան դպրոցի երգեցիկ խմբին, զանազան հիմնարկութիւններին, բոլոր ազգականներին ու բարեկամներին, որոնք թէ ներկայ էին յուղարկաւորութեան և թէ հեռագիրներով ու նամակներով արտայայտել էին իրանց ցաւակցութիւնը։ 1—1

Բացված է բաժանորդագրութիւն

„ՀՈՍԱՆՔ“

Քաղաքական, տնտեսական եւ հասարակական օրաթերթի

Բաժնեգինն է՝ ամսական—50 կ., մինչև տարվայ վերջը 60 կ.։ Հատով—3 կոպ.։

Օրաթերթը կը սկսի լոյս տեսնել նոյեմբերի 23-ից։

Դիմել՝ Тифлисъ, Николаевская ул. № 9, Редакція «Осанкъ».

աա. 4—4

ԲԱՑՎԱԾ Է ՆԱՂԴ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 Թ.

ԽԱԹԱԲԱԼԱ

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

| | | | |
|---|---|---|---|
| Տարեկան գինն է՝ Թիֆլիսում | 4 ր. | Ուրիշ տեղեր՝ | 5 ր.։ |
| կէս տարվայ » » | 2 ր. | » » | 2 ր. 50 կ. |
| 3 ամսվայ » » » | 1 ր. | » » | 1 ր. 25 կ. |
| 1 ամսվայ » » » | — 40 կ. | » » | — 50 կ. |

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ի տարեկան բաժանորդները 1907 թւին, բացի 50 № թերթից ՁՐԻ ստանալու են. 1) գունաւոր ՏԱԽՏԱԿ—ՕՐԱՑՈՅՑ, 2) միջադիր խիստ շքեղ պատկեր՝ զանազան գոյներով տպված, 11×8 վերշոկ մեծութեամբ, որ ծառայելու է որպէս պատից կախելու ԶԱՐԴ—ՊԱՏԿԵՐ և 3) մի «ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ», մօտ 200 միջադիր երեսներից բաղկացած, ուր մտնելու են եւրօպական և ռուսական նոր երգիծաբանական գրողների լաւագոյն գրուածքներից նմուշներ։

Ընդունում ենք ամէն լեզուներով՝ յայտարարութիւններ։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Хатабала».

Խմբագիր-Հրատարակող՝ Աստ. Երիցեան

(ու. կ. ե.) աա. 4—20

## Հայկական Դեմոկրատիական Կուսակցութեան Ժամանակաւոր Կենտրոնական Բիւրօն

Յայտարարելով կուսակցութիւնը կազմված՝ համաձայն առաջին ընդհանուր ժողովի որոշման, հրաւիրում է իր դեկլարացիայի մէջ յայտարարված սկզբունքների համակրողներին՝ համախմբվել և կազմել տեղական ճիւղեր իր կօմիտէներով և այդ մասին յայտնել կենտրոնական բիւրօյին։

Ժամանակաւոր բիւրօյի անդամներ՝—Ս. Յարութիւնեան, բժիշկ Կ. Ստեփանեան, Ալէք. Քալանթար, Հ. Առաքելեան, Յ. Սպէնդիարեան, Բ. Վէրմիշեան, Միք. Աթաբէգեան, բժիշկ Բ. Ազատբեան, բժ. Տ. Գէորգբէգեան, Ե. Ղուկասեան, Լ. Դանիէլեան, բժ. Մ. Մովսիսեան, Արշ. Մխիթարեան։

աա. (ա. օ.) 6—10

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԴԷՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.

Բժ. Ֆ. Վ. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.

Բժ. Մ. Ի. ՆԱՆՋԷՎՍԿԻ.—Ականջի, քթի և բկի, չորեքշ., ուրբ., կիր. 2—3 ժ.

Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.

Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բկի և ականջի, երկ. երեք. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.

Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիպնօզով ամենայն օր 4—5 ժ.

Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՁԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.

Բժ. Վ. Ի. ԻՆԱԵՎ.—Ներքին, 1—2 ժ. երեքշ., չորեք., շաբ., կիրակի, կանանց երկուշաբթի, հինգշ., 1—2 ժ., ուրբ. 12—1 ժ.։

Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Ներքին, երեխ. երեք., հինգ., շաբ. 4—5 ժ.

Բժ. Ա. Տ. ՐՕԶՄԱՐԻՆՍԿԻ.—Երեխ., չորեք., շաբ 11—12 ժ. երկ., ուրբ. 1—2 ժ.

Բժ. Ն. Ի. ՆԷՈՒՅՄԻՆ.—Աչքի, երկ., երեք., չոր., ուրբ., շաբ., 11—12 ժ.

Բժ. Ա. Ա. ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., չոր., կիր. 12—1 ժ., երեք., ուրբ. 1—2 ժ.

Բժ. Ջ. Ֆ. ՆԵՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—1 ժ. ամենայն օր.

Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ } կլինիքական անալիզ
Բժ. Կ. Ի. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ }

Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմն. մասսաժ, ելեքտր. 4—6 ժամ.

Մ. Ե. ԴՕՐՕԳՕՅՕՎԱ.—Մասաժ. 11—4. ժ.

Ս. ԵՍ. ՊԱՒԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.

Վ. Ի. ԻՆԱԵՎ.—Ներքին, 11—1 ժ. երկ., երեք., չորեք., ուրբ., կանանց 1—2 ժ. հինգշ., շաբաթ., կիրակի։

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիպնօզել, ստամոքսի և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան։

աա. (ա. օ.) 8—144

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Անաստասէվսկայա փողոց, տուն № 18, հեռախօս 966։

Հիւանդ կանանց ընդունելութիւնը ամէն ժամանակ նախօրօք յայտարարութեան համաձայն։

Երթևեկ հիւանդների ընդունելութիւնը ամենայն օր ցերեկվայ ժամը 11—12 հետևեալ բժիշկների ձեռքով.

Ա. Բ. Ֆիշէր.—երեքշաբթի, շաբաթ։
Ա. Գ. Բարաւկօվ.—չորեքշաբթի։
Ա. Պ. Շահ-Պարօնեան.—կիրակի, հինգշաբթի։
Ա. Ա. Նօվիցկի.—երկուշ. ուրբաթ։

Երեխաների հիւանդութիւնների համար Ն. Զ. Ումիկօվը հիւանդ երեխաներին ընդունում է երկուշաբթի և հինգշաբթի օրերը, 2—3 ժ.։

Հիւանդանոցին կից կատարվում են քիմիկօ-միկրօսկօպիական հետազօտութիւններ՝ մէզի, խորխի և այլն։

Ստամոքսների քննութիւն, սրսկումն և այլն։ 2—10

ԲԺԻՇԿ

**Տ. Ա. Խախանեան**

ՄԱՍՆԱԳԷՏ՝

ներքին եւ վեներական

հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 11—1 ժ. / երեկոյեան 5—7 ժ.

Սօլօլակ, Սերգիեվսկայա 15, Փրիդօնովի տանը։

աա. (հ. ու. չ.) 12—100

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ջգրաշէնի սուրբ Աւետաց եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը, ծխական ընդհանուր ժողովի որոշման համաձայն, 1906 թւի դեկտեմբերի 1-ից տալիս է կապալով հետևեալ եկեղեցական կալուածները, որ գտնվում է նոյն եկեղեցու գաւթում.

1) Մի խանութ,

2) Մի խանութ սենեակով միասին և նըրկուղով,

3) Մի նկուղ (подвалъ) խանութների տակ,

4) Մի լայնածաւալ նկուղ ուսումնարանի դասատուների տակ,

5) Մի բնակարան ուսումնարանի վերին յարկում, բաղկացած 8 սենեակներից՝ 2 խոհանոցով, ջրով և բոլոր յարմարութիւններով։

Սենեակները կարելի է 2 մասի բաժանել։

Աճուրդը կայանալու է 1906 թւի 26-ին նոյեմբերի Ջգրաշէնի ուսումնարանի գրասենեակում, ուր և կարող են դիմել պայմանների հետ մանրամասնօրէն ծանօթանալու, առաւօտեան ժամը 8½-ից մինչև ցերեկվայ ժամը 1-ը։ (ու.) 1—1

## Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ

յարգելի հասարակութեան յայտարարում ենք, որ տիկին Իզմիրեանի մահը արգելք հանդիսանալով մեր գրական-երաժշտական երեկոյի կայացման որոշեալ նախկին տեղում՝ (Արշակունու դահլիճում) ապա կը կայանայ գերմանական ժողովարանի դահլիճում՝ Միքայէլեան փողոց (Михайловск. просп. нѣмецк. клубъ), շաբաթ, նոյեմբերի 25-ին, երեկոյեան ժամը 7-ին։

Տոմսակները վաղօրօք կարելի է ձեռք բերել Սակայեանցի կանցիլեարիայում (Սօլօլակի փողոց)։ 1—1

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տէր դարձէք ձեր գործերին. Վերջին տեղեկութիւններ. Ա. Սեդրակեանի յիշատակին. Ինչ յոյսերով. Մամուլ. Համայնքի վերացումը և մամուլի կարծիքը. Գիտակցական վերաբերմունք. Մի խոստովանութիւն Ստոլիպինի հետ. Ներկայացուցչական կառավարութիւն. Թատրոն և երաժշտութիւն. Նամակ Ալէքսանդրօպոլից. Նամակ Բաթումից. Նամակ Վաղարշապատից. Մի կարծիք. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սուլթանը հիւանդ. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

## ՏԷՐ ԴԱՐՁԷՔ ՁԵՐ ԳՈՐԾԵՐԻՆ

### I

Մենք ստանում ենք գանգատներ գիւղերից իրանց արդի կացութեան, իրանց անարժան պաշտօնավարների, իրանց կեղեքող-հարստահարողների մասին։

Մենք գիտենք, որ գիւղական կեանքը շրջապատված է ծանր աղքատութիւններով և կաշկանդող հանգամանքներով։ Բայց և այնպէս մենք կարծում ենք առհասարակ եթէ մեր գիւղական ժողովուրդը աւելի գիտակցական և աւելի ինքնուրոյն լինէր, նա բաւական օգնած կը լինէր ինքն իրան և հեռացրած կը լինէր իր կեանքին խոչընդոտ հանդիսացող արգելքների մի նշանաւոր մասը։

Գանգատվում են թէ՝ վատ է տանուտէրը, կողմնապահ և կաշառակեր են դատաւորները, ագահ է քահանան, գանցառու է երէցփոխը, անասնած են վաշխառուները, թոյլ է դպրոցի հոգաբարձութիւնը և այլն։

Սակայն դու, գիւղական համայնք, եթէ փոքր ինչ աւելի գիտակցական լինէիր և համերաշխ, միթէ չէիր կարող զսպել քո պաշտօնավարներին և նրանց յիշեցնել իրանց պարտականութիւնների մասին։ Միթէ չէիր կարող ընտրել աւելի պարտաճանաչ և խոհական տանուտէրերի, աւելի արդարասէր և անկաշառ դատաւորների, աւելի բարեխիղճ երէցփոխի, աւելի պատրաստված քահանայացուի, աւելի խոհական հոգաբարձուների և այլն։

### II

Քանի դու, գիւղական ժողովուրդ, կը մնաս քո անտարբեր և տարտամ վիճակի մէջ, այնքան էլ երկար ժամանակ կը շարունակվի քո տառապանքը։

Դարձիր տէր ու տնօրէն քո գործերի և դու կը տեսնես, որ կամաց-կամաց կը փոխվի իրերի դրութիւնը։ Իսկ եթէ ձեզնից իւրաքանչիւրը իբրև անհատ կը քաշվի մէկ կողմ, կը համակերպվի աւելի ուժեղներին, այն ժամանակ գիւղը դեռ շատ տարիներ դատապարտված կը լինի թշուառութեան։

Ով, գիւղի մէջ եղած գիտակցական տարրեր, միացէք, ձեռք ձեռքի տուէք և ուժեղացրէք համայնքի հանրային ձայնը։ Երբ որ ձեզ կաջողվի համայնքին ներշնչել վստահութիւն՝ տէր դառնալու իր գործերին, այն ժամանակ կը կազմվի մի աւելի մեծ և հեղինակաւոր ոյժ, քան առանձին անհատներն ունեն և ժողովուրդը կարող է սկսել իրագործել գիւղի բարօրութեան մի շարք ծրագիրներ։ Համայնքով, ընդհանրութեամբ, միացած ոյժերով դուք կարող էք և պաշտօնավարների աչող ընտրութիւններ անել և զանազան ձեռնարկութիւններ սկսել և զսպել այն կեղեքիչներին, որոնք ուժեղ են հէնց նրանով, որ նրանց դէմ չը կայ կազմակերպված հասարակական կարծիք և դիմադրութիւն։

Ա. Քալանթար

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Էջմիածնից մեզ գրում են. «Վեհափառ Հայրապետը մի նոր կոնդակով յանուն Սուրէնեանց արքեպիսկոպոսի յետ է վերցրել իր այն կոնդակը, որով թոյլատրել էր միաբանութեանը պարբերական ժողովներ գումարելու արտօնութիւն։ Ժողովները սկսված էին և միաբանութիւնը մի շարք պաշտօնեաներ էր ընտրել։ Այժմ ժողովով ընտրված և Վեհափառի կոնդակով հաստատված պաշտօնեաներն արձակված են միաբանական ժողովները քանդող կոնդակով։ Այսուհետև պաշտօնեաները դարձեալ պիտի նշանակվեն Վեհափառ Կաթողիկոսից, ինչպէս առաջ»։

—

Թիֆլիսի Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովի խնդրանօք հարկաւոր ենք համարում յայտնել, որ Յանձնաժողովը, ինչպէս երէկ արդէն հաղորդեցինք, որոշել է իր կողմից յատուկ պատգամաւորութիւն ուղարկել զանազան հայաբնակ քաղաքներ ժողովարարութիւն անելու՝ հայ տառապեալներին ցորեն մատակարարելու համար։ Ինչպէս երևում է, այդ նպատակով ժողովարարութեան է դիմել և Բագուի հայկական Կուլտուրական ընկերութիւնը, բայց դա անկախ և Յանձնաժողովի հետ ոչ մի կապ չունեցող ձեռնարկութիւն է։ Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովը կապ ունի Բագուի այն մասնաժողովի հետ, որ ղեկավարութեամբ պ. Բ. Դօլուխանեանի, Արմաւիրում և հիւսիսային Կովկասում 130 վագօն ցորեն է գնել։ Յանձնաժողովի և այդ մասնաժողովի մէջ կայացած փոխադարձ համաձայնութեամբ, Յանձնաժողովը իր վրա է առել ծախքերի մի մասը հոգալ և կատարել ցորենի բաշխումը։ Ցորենի մի մասը, մօտ 60 վագօն, արդէն ստացված է և ուղարկված Ղարաբաղի, Զանգեզուրի, Գանձակի, Ղազախի, Շամշադինի, Նախիջևանի շրջանները։ Եւ որովհետև այդ ամենի համար, այն է ցորենը գնելու, փոխադրելու համար ահագին գումար է հարկաւոր, որի մի մասը պէտք է հոգայ Յանձնաժողովը, ուստի վերջինս և որոշել է յատուկ պատգամաւորութիւն կազմակերպել և դիմել ժողովարարութեան։

—

Սղնախից մեզ գրում են. «Հայկական Դեմօկրատիական կուսակցութեան կազմումը մեծ ուրախութիւն պատճառեց մեզ։ Ողջունում ենք նախաձեռնողներին։ Հայկական Դեմօկրատիական կուսակցութիւնը պէտք է ազատէ հայ ժողովուրդը խաւարի ստրկական շղթաներից։ Նա ճիշտ պատեհ ժամանակին է հիմնվում»։

—

Շուշեր, 19 նոյեմբերի

Այսօր առաւօտ Մուրութեանների տան ետևը գտան մի սպանված թուրքի դիակ։ Գիւղը իրարանցումի մէջ ընկաւ, որովհետև պիտի ասէին, թէ հայերն են սպանել, բայց շնորհիւ քննչի և տանուտէրի, չարագործները գտնվեցին։ Արիւնի հետքեր գտան մօտիկ ապրող մի հրէշուհու տանը, որը յայտնեց, թէ «սպանվածը իրան ծանօթն է, այդ գիշեր հիւր էր իր մօտ, որին տեսնելով իրան եղբայրը, մի պարսիկի օգնութեամբ սպանեցին նրան ու դէն ձգեցին»։

Շուշեր, 20 նոյեմբերի

Մեր նոր գաւառապետ պ. Լէօնտիեւ բոլորովին անսպասելի կերպով պաշտօնանկ եղաւ։ Պ. Լէօնտիեւ համարվում էր ամենակոյր գործիք ռէակցիօնների համար, ում շնորհիւ Շուշերում էլ գաղտնի ոստիկանութեան բաժանմունք հիմնվեց։ Շատերի կարծիքով պարոնը շատ պէտքական էր հայ-թուրքական ընդհարումների ու գողութիւնների համար որպէս խիստ մարդ։

Մեր գաւառում գաւառապետ լինելը շատ էլ հեշտ չէ, որովհետև խնդիրգաները շատ են։ Հաշտարար միջնորդների, ազնուականների պարագլխի ու գաւառապետի մէջ միշտ մրցում կայ. Նրանցից իւրաքանչիւրն էլ ուզում է տէր լինել գաւառին, բայց ինչպէս ասում են, „ոչ այն մտքով, որ օգուտ բերեն հասարակութեան, այլ միմեայն անիրաւ ու գայթակղեցուցիչ ռակներ դիզելու նպատակով։

**

—

Թեհրան, 22 նոյեմբերի։—Շահի առողջութիւնը դէպի լաւն է գնում։—Մէջլիսի շաբաթ օրվայ նիստում Սէյիդ-դովլէն յայտնել է, որ անցել է արդէն մի քանի օր այն ժամանակից, երբ ամեն կողմից խոստումներ խոստումների ետևից տեղացին՝ նիւթապէս աջակցելու ազգային բանկին, այն ինչ առայժմ բանկի բաժնեգների համար գրվել են հազիւ 10 հոգի (Կոր. բիւրօ)։

(«Հեռ. Գործ.»)

—

Թաւրիզ, 22 նոյեմբերի։—Դահաժամանդ Մահմէդ-Ալի-Միրզան մեկնեց երեքշաբթի առաւօտեան։ Հրաժարականի տեսարանը շատ սրտառուչ էր։ Դահաժառանգը ձիով անցաւ փողոցները, ամբոխի մօտով։ Ճանապարհ էին գցում մօտ 50,000 մարդ։ Թեհրանից ստացած արժանահաւատ լուրերին նայած, Շահի առողջութիւնը դէպի վատն է գնում։

(«Հեռ. Գործ.»)

—

Պետերբուրգ, 22 նոյեմբերի։—Առևտրի մինիստրութեան կից կազմած խորհրդակցութիւնը, Լանգօվօյի նախագահութեամբ, հակառակ է խօսել ռուսական նաւթը Բագուից Վոլգայի վրայով, Բալթիական ծովով և Վիսլայի վրայով—լեհական թագաւորութեան միջոցով—Գերմանիա տեղափոխելու դէմ։

—

Գանձակ, 22 նոյեմբերի։—Ղազախում Ջրաբաշխի ադմինիստրացիայի պաշտօնական անձանց ընտրութիւններին կուսակցութիւնների միջև խոշոր ընդհարում է տեղի ունեցել. կան քարերով վիրաւորվածներ. կանչվել են զօրքեր, որոնց երևալով հանգստութիւնը վերականգնվել է։

(«Հեռ. Գործ.»)

—

Սեվաստոպոլ, 22 նոյեմբերի։—Պատերազմա-դաշտային դատարանը դատեց բրնից ծովապետ Չուխնինի սպանութեան գործը։ Մեղաւոր են ճանաչված նաւաստի Բօնդարենկօն և գիւղացի Շաւէնկօն, մարդասպաններին բռնելու ժամանակ չօգնելու և անգործութեան համար, և դատապարտված են իրաւունքների զրկման և 15-ամեայ տաժանակիր աշխատանքների։ Երկրորդ մեղադրվող Պուխօվը արդար է ճանաչվել։

(«Հեռ. Գործ.»)

—

Հարաւային Պարսկաստանի Բուշիր քաղաքի փոքրաթիւ հայերը, հաւաքելով իրանց մէջ 1000 ղրան (170 րուբլի), փոխադրել են «Բ. Արղումանեան վաճառատան» միջոցով Թիֆլիսի Նպաստամատոյց Յանձնաժողովին ի նպաստ հայ տառապեալների։ Նոյն նպատակով Բօտավիայի (Ջաւա կղզու) փոքրաթիւ հայերը ուղարկել են Նպաստամատոյց Յանձնաժողովին 310 գիլդր կամ 25 անգլիական ոսկի (250 րուբլի), խնդրելով իրանց եղբայրական այդ լուման հեռաւոր երկրից հասցնել հայ աղէտեալներին։

## Ա. ՍԵԴՐԱԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

—

Մոսկվա, 21 նոյեմբերի

Արտայայտում եմ անկեղծ վիշտ արքեպիսկոպոս Սեդրակեանի մահվան առիթով, այդ հազուագիւտ լուսաւոր ներկայացուցչի ժամանակակից հայ հոգևորականութեան, որ ամփոփում էր իր մէջ լաւագոյն աւանդութիւնները, մայրենի եկեղեցու ազատ ժողովրդական ոգին։ Մեր խաւար կեանքի այս օրերում, երբ ամեն ինչ որ մայրենի է, ամեն ինչ որ թանկագին է՝ ոտնակոխ լինելով հեծեծում է ներքին կամայականութիւնից, անկարգութիւններից և մոլերի, համոզմունքների քաօսական դրութիւնից, առանձնապէս զգալի է և ծանր կորուստը այնքան շիտակ, համարձակ, աննկուն մարտնչողի, որ անդադար հառաչում էր մայրենի կեանքի լուսաւոր իդէալների համար։

Ալէքսանդր Մատուրեան

—

(Նամակ խմբագրութեան)

Ցարիցինի հայ հասարակութիւնը ընտրելով մեզ, յանձնարարել էր Աստրախանի թեմի հանգուցեալ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանի դագաղի վրա դնել մի պսակ կամ նոյն արժէքը յատկացնել մի բարի գործի։ Մենք յարմար գտանք վերջինը. ուստի համաձայնեցինք յանձնել քսանհինգ րուբլի կարգադիր մասնաժողովի անդամ Եփրեմ հայր-սուրբին՝ ապագայում հաւաքված փողերի հետ գործադրելու։

Պատգամաւորներ՝ Երեմիա վարդապետ
Յակոբ Օջաղեանց

—

Շուլավէրից մեզ գրում են.

Կիրակի օրը ս. Մեսրոպ եկեղեցում հանգուցեալ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանի համար հոգեհանգիստ կատարվեց։

—

Ղզըլ-Չախչախից (Կարսի նահանգ), 20 նոյեմբերի

Ղզըլ Չախչախի մի խումբ երիտասարդներս մեր խորին ցաւակցութիւնն ենք յայտնում մեր անմոռանալի Նախիջևանի թեմական առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանի մահվան առիթով։ Հանգիստ հայրենասէր և ճշմարիտ հոգևորականի աճիւններին, յիշելով Եղիշէ մատենագրի խօսքերը. «Մահ իմացեալ անմահութիւն է, մահ ոչ իմացեալ մահ է»։

Գարեգին Մկրտչեան

—

Կարս, 18 նոյեմբերի

Արդի հայ հոգևորական դասի ամենափայլուն, ամենաանկեղծ ու շիտակ ներկայացուցչի՝ Արիստակէս սրբազան արքեպիսկոպոս Սեդրակեանի անակնկալ մահվան գոյժը ցնցեց և Կարսի հայ հասարակութեան բոլոր խաւերի սրտերը։ Այժմ չը կայ նա, որը իր մեծ վարդապետի օրինակին հետևելով իր, անձը դրեց իր սիրեցեալ հօտի—հայ ժողովրդի—լուսաւորութեան, կրթութեան, բարեկեցութեան, բարօրութեան և փրկութեան վրա։ Մեծ է կորուստը հայ ազգի համար, մանաւանդ ներկայ օրհասական վիճակում հայոց եկեղեցու և ազգի համար, երբ մեծ յոյսեր ունէինք դրած երջանկայիշատակ սրբազանի վրա...

Ի հեռուստ խոնարհվելով սրբազանի թարմ հողակոյտի առջև՝ որդիական համբոյրներ ենք դրոշմում և բարի երթ ենք մաղթում նրան դէպի իր յաւիտենական օթևանը, դէպի իր պաշտելի Վարդապետը, Որին իր սուրբ ուխտին հաւատարիմ մնաց մինչև իր կեանքի վերջին րոպէները։

Թղթակից

—

Էջմիածին, 20 նոյեմբ.

Կիրակի, ամսիս 19-ին, Մայր տաճարում պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարվեց ի տէր հանգուցեալ Արիստակէս արքեպիսկոպոսի համար։ Դամբանական խօսեց Կարապետ վարդապետը, որ ներկայացրեց հանգուցեալին իբրև ներկայ հոգևորականութեան ամենալաւագոյն ներկայացուցիչներից մէկը, դրուատեց նրա գործունէութիւնն ու եռանդը։ Շեշտեց, որ նա եղել է, նպաստել է հայ հոգևորականութեան ընկած վարկը բարձրացնելու և գործին ուղիղ ընթացք տալու՝ զսպելով կուսակցութիւնները, որ նա նպաստել է կրթված հոգևորականներ ձեռնադրելու և արժանի էր աւելի խոշոր ասպարէզի վրա գործելու, այն ինչ նրան Աստրախան ուղարկելով կարծես ասպարէզից հեռացրին։ Յիշեց նաև Աստրախանի Թեմական դպրանոցի բացումը, որ նրա եռանդուն աշխատանքի պտուղն էր»։

—

(Նամակ Սղնախից)

Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանի մահը ծանր տպաւորութիւն թողեց մեր հասարակութեան վրա։ Հանգուցեալը, որպէս մեր առաջնորդը, այցելել է Սղնախ 1883 թ. և իր կորովի գործունէութեամբ սիրելի էր դարձել հասարակութեանը։ Այս ժամանակ նա հրամայում է Եղիշէ քահանայ Տէր-Աստուածատրեանին, որը դպրոցի հոգաբարձու էր, ընտրել օրիորդաց դպրոցի համար հոգաբարձուհիներ, որ և կատարվում է։ Հայ հասարակութեան կողմից, նախաձեռնութեամբ հոգաբարձուներ Սարգիս Յովակիմեանի և Քրիստափոր Տէր-Աստուածատրեանի ուղարկվեց պսակ հանգուցեալի դագաղի վրա դնելու, իսկ պատգամաւոր նշանակվեց մեր հայրենակից նկարիչ Գէորգ Բաշինջաղեան։ Կիրակի, Նոյեմբերի 12-ին մայր եկեղեցում կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ։ Ներկայ էին հայոց դպրոցի աշակերտներն ու աշակերտուհիներն իրանց ուսուցիչներով։ Դամբանական խօսեց Արշակ քահանայ Տէր-Ստեփանեան, նկարագրելով հանգուցեալի գործունէութիւնը։

Յ. Գրիգորեան

## Ի՞ՆՉ ՅՈՅՍԵՐՈՎ.

### I

Համայնքի լուծման նպաստող օրէնսդրական կարգադրութիւնները, անշուշտ, ունեն նաև որոշ քաղաքական նպատակներ։

Յայտնենք մեր ենթադրութիւնները։

Համայնքի լուծվելը և քայքայվելը ձեռնտու է գիւղացիների մի որոշ մասի համար։ Ճիշտ է, այդ մասը մեծ չէ քանակով, բայց նա ազդեցիկ է գիւղում։ Եւ ահա գիւղական այդ ազդեցիկ մասի համակրութիւնը գրաւելը ունի կառավարչական շրջանների համար իր ժամանակակից որոշ գործնական նշանակութիւնը, որը և ուշադրութեան է առնվել։

Այժմ, երբ հաշւի են առնվում ազգաբնակութեան բոլոր տարրերի բռնած դիրքերը, նրա համակրութեան և հակակրութեան արտայայտութիւնները, ան[illegible] գին ու արժէք են ստանում այն նոր դասաւորութիւնները, որոնք կազմվում են գիւղերում և թեքում են վստահութեան նժարը դէպի այս ու այն կուսակցութիւնը, դէպի կառավարչական թէ ընդդիմադրական կողմերը։

### II

Մի ուրիշ դիտաւորութիւն կամ ձգտում կարելի է ենթադրել այն, որ համայնքի լուծելով և մասնաւոր սեփականութիւններ հաստատելով՝ գիւղի մէջ մուտք են գործում այնպիսի տարրեր, որոնք դէմ կը լինեն հողերի համայնացման, հողերի հաւասարեցման և առհասարակ կալուածատիրական հողերի պետականացման։

Արդարև, եթէ գիւղական հարուստ, բազմահող գիւղացին կարող լինի իր վրա հաստատել առմիշտ այն հողը, որ ներկայումս իր ձեռքին է գտնվում, մի՞թէ նա կը ցանկանայ, որ հողերի հաւասարութիւն լինի, որ հողը ճանաչվի իբրև գիւղի, հասարակութեան կամ պետութեան սեփականութիւն։

Անշուշտ, բազմահող գիւղացու անձնական շահը կը պահանջէ պաշտպանել իր հողաբաժինը անխախտ, իսկ երբ մի անգամ նա կիւրացնէ այդ տրամադրութիւնը, այն ժամանակ նա առանձին մեծ եռանդով պարտաւոր կը լինի պաշտպանել և կալուածատիրական հայեցակէտները։

Իսկ հէնց այդ էլ հարկաւոր է կալուածատէրերին։

### III

Բարձր աստիճանների որոշ շրջաններում կարծում են, որ Ռուսաստանի մէջ տիրող ներկայ յուզմունքին նպաստում է այն հանգամանքը, որ գիւղական համայնքը պատրաստել է թեթև վերաբերմունք դէպի սեփականութեան սկզբունքը և հող պատրաստել ընդարձակ հողային յեղափոխական շարժումների համար։

Սակայն դա նշանակում է լաւ չը ճանաչել ներկայ իրականութեան գոռ պահանջները և յուսախաբութեան գիրկը ընկնել։

Անկասկած, համայնքը սնուցում է համայնական զգացմունքներ և տեսակէտներ, բայց նոյն համայնքը շնորհիւ իր բարեմասնութիւնների շատ տեղերում բթացրել է զգալու այն ծանր դրութիւնը, որի մէջ գտնվում է ժամանակակից գիւղը։ Եթէ հողի պակասութիւն չը լինէր, եթէ կարիքը բաղխում չը լինէր գիւղացու դուռը, մի՞թէ գիւղացին կը մաշէր իր կեանքը աւելորդ և ապարդիւն կռիւներ։

Ոչ, համայնքը չէ ոտքի կանգնեցրել և յուզմունքի մէջ գցել գիւղական մասսաները, այլ գիւղական կարիքը, սովի ուրուականը, հողի պակասութիւնը։

### IV

Լուծելով համայնքը, կառավարութիւնը ոչ թէ չէ մեղմացնում եղած ծանր տրամադրութիւնը, այլ ընդհակառակը, խստացնում և բարդացնում է նրան։

Այն յոյսերը, որ դրված են գիւղի հարուստների և ազդեցիկների վրա, կարող են անաջողութեան հանդիպել, որովհետև գիւղական կարօտեալը ոչ մի բաւարարութիւն չէ ստանում, և եթէ երբէք նա տատանվում էր իր բողոքը արտայայտելու սուր կերպով, վաղը նա կը դիմէ յուսահատական քայլերի։

Եւ մի՞թէ գիւղացին, տեսնելով համայնքի լուծման ծրագրած անարդար կարգադրութիւնը, չի յուզվի, չի դայրանայ և այդպիսով ընդարձակ հող չի պատրաստի քաղաքական գործողների քարոզների [illegible] շարժումների համար։

Համայնքի լուծման օրէնսդրական կարգադրութիւնը սոսկալի սխալ էր, մանաւանդ որ համայնքի լուծման խնդիրը, նոյնիսկ եթէ նա ցանկալի լինէր, պահանջում է մեծ մշակութիւն և մանրամասն ուսումնասիրութիւն։

Ա. Քալանթար

## ՄԱՄՈՒԼ

«Кавказская Рѣчь» թերթը, վերջերս, իր աշխատակից պ. Վիլգի բերանով, քննադատական յօդուածներ է գրում հայկական կեանքից։ Չենք կարող ասել, որ այդ քննադատութիւնը արդիւնք լինի իրերի և հարցերի բազմակողմանի քննութեան, բայց նա արտայայտում է որոշ տրամադրութիւն և հայեացք հայերի մասին, ուստի մեզ մնում է միայն ծանօթանալ ռուս մամուլի արտայայտած կարծիքների հետ և ցոյց տալ նրա որքան ճշգրիտ և իրական լինելը։

Վիլգը № 20-ում ասում է.

«Գիւղական մասսաների կատարեալ անկուլտուրականութիւնը, հասարակութեան միջին խաւերի բռնակցութիւնը և բութ անտարբերութիւնը, ագահ, կեղծաւոր և տգէտ հոգևորականութիւնը, բուրժուազօրէն և նացիօնալիստաբար լարված ինտելլիգենցիան, սօցիալիստների համեմատաբար թոյլ խմբերը, կամայականութիւնը և վայրենի բռնութիւնը ամեն տեղ, նոյն իսկ Էջմիածնում—ահա հայկական իրականութեան ընդհանուր պատկերը։ Ամբողջ Ռուսաստանը հիւանդ է մի ընդհանուր ցաւով—իրաւունքի և ազատութեան բացակայութեամբ։ Բայց հասարակութիւնը տանջվում է և ներքին ախտերով։ Անկուլտուրականութիւնը և մասնաւորապէս քաղաքական դաստիարակութեան բացակայութիւնը առանձնապէս վառ կերպով արտայայտվեցին Էջմիածնի համագումարի վերջին ընտրութիւնների ժամանակ։ Շատ քաղաքներում (Ախալքալաք, Կարս, Թիֆլիս և այլն) ընտրողական ժողովներում, որոնք կազմակերպված էին բոլորովին դեմոկրատաբար, տեղի ունեցան ապօրինութիւններ, բռնութիւններ, սկանդալներ և նոյն իսկ կռիւներ (Ախալքալաքում)։ Այդ անճոռնութիւնների պատճառ պէտք է համարել լրբացած ամբոխի անարգանքը Սուքիաս արքեպիսկոպոսի դէմ։

«Այս տխուր երևոյթները բացատրվում են մասամբ մահացող բիւրոկրատիայի սիստեմով, մասամբ հայ կրթված դասակարգերի անփորձականութեամբ։ Ռուս ժողովուրդը, մանաւանդ բանւորը, շնորհիւ երիտասարդութեան և ինտելլիգենցիայի հերոսութեան, համակվեց ջերմ սիրով առ ազատութիւնը և հաւասարութիւնը. բայց հայ ինտելլիգենցիան, մեծ մասամբ, չունեցաւ այդպիսի վեհ ոգևորութիւններ»։

Ապա խօսելով կուսակցութիւնների մասին, յօդուածագիրը այն կարծիքն է յայտնում Դաշնակցութեան մասին, որ «այդ կուսակցութիւնը մինչև այսօր միայն փող է հաւաքել և գրգռել է ազգայնական զգացումը ու ուրիշ ոչինչ չէ արել, մինչև վերջին ժամանակները գիտակցաբար հեռացրել է լայն մասսաների ուշադրութիւնը քաղաքական և տնտեսական հարցերից»։

Այս կարծիքի մէջ, ի հարկէ, շատ ճշմարտութիւն կայ, բայց և շատ անճշտութիւններ, ինչպէս նկատել է և լրագրի խմբագրութիւնը, բայց վերջին խօսքերը, թէ Դաշնակցութիւնը մինչև այսօր բացի փող հաւաքելուց ոչինչ չէ արել հայ ժողովրդի համար, սաստիկ գրգռել է հայ «կեղծ-սօցիալիստ» դաշնակցականների վայրոյթը։ Ինչ, Դաշնակցութիւնը մինչև հիմա այն կարծիքի է, որ ինքը բարձրացրել է ամբողջ ազգը, ինքն է եղել և է նրա միակ լուսաւորիչը, փրկիչը (մարակ և զուլումբարականութիւն տարածելով), իսկ այժմ մի Վիլգէ յանդգնում է ասել, թէ նա միայն փող է հաւաքել։ Եւ ահա «Երկիրը» (№ 38) անուանում է Վիլգէին անբարեխիղճ և նրա ոյժերից վեր է համարում Դաշնակցութիւնը քննադատելու գործը «իր կեղծ ծայրայեղութեամբ և պուրիզմով համակված անկապ և տափակ յօդուածներով», միևնոյն ժամանակ ցաւ է յայտնում, որ «սանձարձակ անբարեխղճութիւնը կարծես արդէն քաղաքացիական իրաւունք է ստանում կովկասեան հրապարակախօսութեան մէջ» (միակ բարեխիղճը, ի հարկէ «Երկիրն է!») և «սպառնում է վարակել իր մահաբեր թոյնով մեր գրական մթնոլորտը»։

Թող պ. Վիլգը փառք տայ Աստծուն, որ «Երկիրը» նրա վերաբերմամբ մեծահոգի է եղել, անուանելով նրան միայն անբարեխիղճ։ Չէ որ նա կարող էր գործածել իր սոսկալի (?) զէնքը—անուանել նրան մատնիչ և դաւաճան, որովհետև նա համարձակվում է ասել—ով զարհուրելի ոճիր—որ դաշնակցականները միայն քերթել գիտեն ժողովրդի կաշին։ Այդ նոյն ճշմարտութիւնը, երբ հայ լրագիրները ասացին, նրանք հրատարակվեցին մատնիչ և դաւաճան։

*

Սակայն «Երկիրը» կարող է մխիթարվել և նոյնիսկ ցնծալ։ Այժմ նա պէտք է համոզվէ, որ ամբողջ կովկասեան մամուլը անբարեխիղճ չէ և կայ մի օրգան, որ իր պաշտպանութեան ներքոյ է առնում Դաշնակցութիւնը։ Այդ հովանաւոր օրգանը «Гол. Кав.» լրագիրն է, ռուսական պատրիօտների ընկերութեան բերանը։ Եւ զարմանալու ոչինչ չը կայ. «Նման զնմանն սիրէ». ռուս «պատրիօտների» օրգանը չէ որ պէտք է պաշտպանութիւն ցոյց տայ հայ «պատրիօտների» օրգանին։ Եւ ահա իր № 169-ի մէջ նա մի [illegible] առաջնորդող է նուիրում ի պաշտպանութիւն Դաշնակցութեան, ընդդէմ Վիլգի։ Նա խօսք չէ գտնում գովաբանելու Դաշնակցութիւնը նրա համար, որ այդ կուսակցութիւնը իր վրա է վերցրել ոստիկանական ֆունկցիաներ և պրոկլամացիա է հրատարակել յեղափոխութեան անունով գործող բոլոր կողոպտիչներին և յափշտակողներին։

Պատասխանելով Դաշնակցութեան այդ նոր հովանաւորին, պ. Փիտան ասում է («Кав. Рѣчь» № 24).

«Խեղճ դաշնակցականներ! Նրանց կուսակցութիւնը այնքան աղքատացել է խելօք պոլիտիկներով, որ կարօտ է... «Гол. Кав.» լրագրի իդէական պաշտպանութեան։

«Երբ Բագւում «Դաշնակցութիւն» կոչված «սօցիալիստական» կուսակցութիւնը կամաւորապէս իր վրա է ընդունում ոստիկանական ֆունկցիաներ... «Гол. Кав.» թերթը բառ չէ գտնում դաշնակցականներին գովելու համար։ Բանը նրանումն է, որ լրագիրը երևակայում է սօցիալիստին միայն կողոպտիչի և աւազակի կերպարանքով։

«Եւ յանկարծ—ով զարմանք! սօցիալիստական կուսակցութիւնը յանձն է առնում պաշտպանել քաղաքացիներին կողոպտումներից։ «Гол. Кав.»-ի ուրախութեան չափ ու սահման չը կայ. նա նոյնիսկ չէ նկատում, թէ որքան հեգնութիւն կայ իր ներբողական օրհներգի մէջ։

«Բայց չէ որ դաշնակցականները նրա համար չեն իրանց պաշտպանութեան տակ առել քաղաքացիներին, որ նրանց ծրագրի մէջ մտնում է և ոստիկանական ֆունկցիան, այլ նրա համար, որ Բագուի ոստիկանութիւնը անկարող է կողոպտիչների և մարդասպանների հախից գալ և «Բագուի սօցիալիստները» պէտք է իրանց վրա առնեն նրա պարտաւորութիւնները։ Բայց գուցէ և նրա համար, որ այդ կողոպտիչները և աւազակները այնքան շատ են վերցնում, որ իրանց՝ դաշնակցականների համար էլ բան չէ մնում։

«Гол. Кав.» թերթը, շատ պարզ է, ջերմ ցանկութիւն ունի դառնալ դաշնակցականների օրգան ռուս լեզուով։ Չենք կարող շնորհաւորել «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը, որ ձեռք է բերել այդպիսի դաշնակից և մամուլի «կուսակցական» օրգան»։

Մենք էլ, ի հարկէ, չենք շնորհաւորում, բայց ցաւելու էլ առանձին ոչինչ չունենք, եթէ մի կուսակցութիւն այնքան վայր է ձգել իր բարոյական հեղինակութիւնը, չը կամենալով հիմնել իր գործունէութիւնը նախկին բարոյական հիմունքների վրա, որ այսօր մամուլի մի օրգան գտնում է, որ կողոպտիչներին և աւազակներին կռիւ է յայտարարում նրա համար, որ նրանք ոչինչ չեն թողնում իր համար՝ կողոպտելու և աւազակելու...

Sapienti sat. ահա [illegible] Դաշնակցութեան ապիկար ղեկավարների գործունէութեան հետևանքը։

*

«Знаніе» թերթը (№ 23) մի սաստիկ յարձակում է գործել «Մշակի» դէմ այն պատճառով, որ «Մշակը» թարգմանաբար հաղորդել է անգլիական «Ստանդարտ» լրագրի թղթակցի յօդուածի բովանդակութիւնը Կովկասի այժմեան վիճակի մասին («Մշակ» № 237), առանց իր կողմից որևէ կարծիք յայտնելու։ Իր զայրոյթի մէջ թերթը այնքան առաջ է գնում, որ անուանում է անգլիական թղթակցին «պրոխվոստ, ստախօս, զրպարտիչ», իսկ «Մշակին» յանդիմանում է, որ մտերիմ բարեկամութիւն է հաստատել օտարազգի տուրիստների հետ, և արտատպում է նրանց յօդուածները, որպէս թէ նպատակ ունենք կեղծել հասարակական կարծիքը յօգուտ մի ժողովրդի (հայերի), մի ուրիշ ժողովրդի (վրացիների) հաշւով։

Մեր հասցէին ուղղած այս յանդիմանութիւնը անարդար և ծաղրելի է։ Մեղադրել «Մշակին» ազգայնական շովինիզմի մէջ, թէ նա ուրախ է, երբ գովում են հային և վատաբանում են վրացուն, աւելի քան անտեղի է։ Մենք արտատպել ենք «Ստանդարտ» լրագրի թղթակից Ջօն Ֆօստր Ֆրեզերի ուղևորութիւնից մի հատուած Կովկասի մասին պարզապէս նրա համար, որ ծանօթացնենք, թէ ինչ տպաւորութիւն է ստացել մի օտարազգի, թարմ և կողմնակի մարդ, ճանապարհորդելով մեր երկրում, յեղափոխական շարժման ժամանակ, մեր երկրի և այստեղ կատարվող դէպքերի մասին։ Ճիշտ է, այդ յօդուածի մէջ կան գովասանքներ հայերի հասցէին, բայց կան և աննպաստ կարծիքներ, որ մենք չենք թաքցրել և առաջ ենք բերել, օրինակ այս հատուածը։

«Հայը ուրիշ ազգերից սիրված չէ։ Հրէայի յատկութիւններից շատերը կան նրա մէջ։ Առևտրի մէջ հայը վրացուն իր գարշապարի տակն է առել»։

Եթէ մենք, արտատպելով այդ յօդուածը, մեր կարծիքը չենք յայտնել, դա դեռ չէ նշանակում, որ մենք համաձայն ենք անգլիացի թղթակցի բոլոր կարծիքների հետ։ Եւ վերջապէս, չէ որ «Մշակը» անգլիացու շօշափած հարցերի մասին շարունակ յայտնում է իր կարծիքը իր ուրիշ յօդուածների մէջ։ Եթէ անգլիացին սխալ կարծիք է յայտնել վրացիների և կովկասեան սօցիալիստների ու յեղափոխականների մասին, նրան պրոխվօստ անուանելով չէ, որ կարող էք ջրել ձեր ասածները. դուք աւելի կը զօրացնէք նրա մէջ իր համոզմունքը, գործածելով մի եւրոպացու հասցէին ասիական այդպիսի բիրտ և անվայել լեզու...

*

Մարսէլի «Արմենիա» թերթը (նոյեմբեր 8-ի № 8) ակնարկելով այն սպառնալիքները, որ վերջերս դաշնակցականների կողմից ուղղվեց «Մշակի» խմբագրութեան անդամներին, հետևեալ կարծիքն է յայտնում.

«Չկայ ազգ մը և չի կրնար ըլլալ որու բոլոր անդամները միևնոյն կերպով խորհին, միևնոյն կերպով խօսին և միօրինակ գործեն։ «Ինչքան մարդիկ, նոյնքան կարծիք» շատ վաղուց յայտարարված է. բայց կուգայ վայրկեան մը, մեծամասնութեան շահուն ի խնդիր, որ անջատ կարծիքներ մինչև մէկ աստիճան կը համաձայնին իրարու, կը համերաշխեն և միասին կը գործակցին։ Ասի աւելի ու աւելի կը շեշտուի վճռական րոպէներուն՝ երբ գերագոյն ճիգի մը կարիքը կայ. մինչև այդ ժամանակ համացեղ ազգայիններ միմիայն գրչի և խօսքի զէնքը գործածելու են իրար համոզելու և ապա զէնքի ուժով թշնամւոյն դէմ կռուելու համար։ Ոչ մէկ պարագայի տակ ներելի է ազգայինը բռնադատել բիրտ ուժով իր գաղափարներէն հրաժարեցնելու համար. այնպիսին կոյր մ'է, [illegible] բարբարոս մ'է, ձերբակալուելու յիմար մը։ Ի՞նչ գրօշակի ու տարբեր դաւանանքի պատկանելու ըլլայ անհատ մը, ազգային վսեմ պարտականութիւնն է քարոզել, խօսիլ, համոզել, գաղափարը տարածել... և ոչ թէ մահուան սպառնալեօք բռնանալ և երբեմն դէպի մահ առաջնորդել զայն... Արմենիայի վերջընթեր թուով Թիֆլիսի թղթակցին գրածները կը ներկայացնեն կոպիտ բռնութեան մը բացայայտ նշանը, կայէնական արարք մը, «Մշակ»-ին՝ նոյնանման սպառնալիքներու դէպքերու ամենօրեայ լրատու մը լինել վիճակուած է։ Գա՞ն մը կապկէնք, անմեղ տարակուսանքով կը դիտենք սա օրն օրին տեղի ունեցող անմարդութիւնները «ինտելիգենտ» դասակարգին մէջ»։

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՒ ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ

Այն օրից, երբ կառավարչական շրջաններում համոզվեցին, որ գիւղացիութիւնը գոհ չէ մնում իրան յատկացրած հողաբաժինների քանակից և աւելի լայն պահանջներ ու ձգտումներ է ցոյց տալիս, սկսեցին հրատարակել նորանոր ուկազներ ու կարգադրութիւններ, որոնք մի նպատակ ունէին, այն է՝ ամրապնդել գիւղացիութեան գիտակցութեան մէջ հողի «սրբազան» սեփականութեան իրաւունքը։ Այդ ի նկատի ունի, արդեօք, նորերս լոյս տեսած նոյեմբերի 9-ի ուկազը, որը ամենայն արդարութեամբ պէտք է անուանել համայնական հողատիրութեան վերացնելու ուկազ, յայտնի չէ։ Բայց որ այդ ուկազը կարող է ազգաբնակութեան հասկացողութեան մէջ սեփականութեան իրաւունքի մասին ունեցած ամենաաննշան գաղափարն անգամ խախտել, խախտել այն, ինչ որ ունէր նա արդարութեան ու օրինականութեան մասին և այլն, դա անկասկած է։ Այդ դեռ քիչ է, նա ազգաբնակութեանը կը դրդէ կամ նրա մէջ կամրապնդէ այն համոզմունքը, որ նա իրաւունք ունի յափշտակելու, խլելու այն, «ինչ որ ինձ հարկաւոր է», էքսպրոպրիացիա անելու իրաւունքի համոզմունքը, միայն թէ հակառակ ուղղութեամբ. ոչ թէ հասարակական շահի համար, այլ իրաւունք ունենալ էքսպրոպրիացիա անելու հասարակութիւնից առանձին անհատի օգտի համար։ Կառավարչական անձանց ագրարական հարցի հակադիր իմաստութիւնը այդ ուղղութիւնն ունի. համայնքի զարգացման փոխարէն՝ զարգացնում է անհատի սեփականատիրական իրաւունքը ի վնաս համայնքի, ի վնաս այն համոզմունքի, որ ունի գիւղացիութիւնը. հողը համայնական է, նրա մասին կարգադրողը համայնքն է, և նրան էլ վերապահվում է իրաւունք ընդհանուր ձայների $^{2}/_{3}$ մեծամասնութեամբ համայնական հողատիրութիւնը դարձնել ծխային։ Մինչդեռ նոյեմբերի 9-ի ուկազով ոչնչանում է համայնքի իրաւունքը։

Ռուսաստանի մամուլը ներկայումս անհաշիւ յօդուածներ է նուիրում այդ ուկազին և համարում է միանգամայն վնասակար։

Համայնքի մասին հրատարակված այդ նոր օրէնքը պաշտպանելով «Россія» օրգանը, հակասութիւնների մէջ է ընկնում։ Մի կողմից, նրա կարծիքով, համայնքը ներկայանում է «իբրև մի կապանք, որի ամբողջ կոչումն է կապել իր անդամների ոտներն ու ձեռքերը, դատապարտելով, նրանց ընդմիշտ թաղելու իրանց անձնաւորութիւնը, իրանց անհատականութեան բոլոր ոյժը համայնքի սկզբունքի մէջ»։

Եւ նոր օրէնքը վերցնում է այդ կապանքները ու առաջնորդում է ռուս գեղջուկին դէպի առաջ և կուլտուրական անհատականութիւնը։ Միւս կողմից,

«Այդ նոր օրէնքի ամենակարևոր նշանակութիւնը ոչ թէ համայնքի վերացումն է, որին նա ամենևին չէ էլ ձգտում, այլ համայնքը վերակազմել իր իսկական ձևով»։

Սակայն պաշտօնական օրգանը ինչպէս է կարծում. համայնքի սկզբունքը չարի՞ք է, թէ բարիք։ Օրէնքը կռւում է նրա դէմ, թէ՞ խրախուսում նրան։

—

Քննադատելով նոյն օրէնքը «Рѣчь» լրագիրը, գալիս է այն եզրակացութեան, որ նա նպատակ ունի պաշտպանելու բազմահող գիւղացիներին սակաւահողերի դէմ կռւելու ժամանակ, ուժեղներին թոյլերի դէմ, հարուստներին աղքատների դէմ։

«Գիւղի շահերը շօշափված են նոր օրէնքով այնքան խորունկ կերպով, որ հազիւ թէ նա անհետևանք անցնի։ Նրանից կաշխատեն օգուտ քաղել և գիւղում կը սկսվի կատարեալ քաղաքացիական պատերազմ։ Յարձակվող կողմը կը լինի ազգաբնակութեան այն նոր օրէնքով հովանաւորվող, իր թւով աննշան, բայց և այնպէս սօցիալապէս ազդեցիկ տարրը։ Պաշտպանվող կողմը կը լինի գիւղացիութեան մեծ մասը, զօրեղ իր համախմբմամբ և կարող իր դասակարգային բնազդով։ Յարձակվողները պէտք է դիմեն օրէնքի ուժին, իսկ պաշտպանվողները՝ հաւաքական բռնութեան այն բոլոր միջոցներին, որոնցով արդէն նրանք վարժվել են կռւելու կալուածատէրերի դէմ։ Որ նոր օրէնքը ձգտում է ստեղծել մանր կալուածատէրերի մի նոր դասակարգ հէնց գիւղացիութեան մէջ, այդ, ի հարկէ, հասկանալի կը դառնայ անմիջապէս»։

—

«Р. В.» լրագիրը վերլուծելով նոր օրէնքի բոլոր վնասակար կողմերը, հետևեալ եզրակացութիւնն է անում.

«Նոյեմբերի 9-ի ուկազի շնորհիւ համայնքի գոյութիւնը, համերաշխութիւնը այնքան անհնարին կը դառնայ, այնպիսի «ագրարական անկարգութիւններ» կը ծագեն համայնքի ներսում, այնպիսի պառակտում կը ստեղծվի գիւղացիութեան մէջ, որ այդ բոլորի տեսիլը, նախապատկերը շատ տեղերում կը զսպէ այդ օրէնքի օգնութեանը դիմողներին, նրանց իրագործողներին, ուղղակի լոկ հրդեհաձգութեան սարսափից։ Այդպիսի պայմաններում հրատարակված ուկազը գուցէ դեռ շուտով չը կարողանայ վերացնել համայնքը, գուցէ դեռ շուտով չը կարողանայ գիւղացի մասսաներին հողազուրկ անել, նրանց շարքերում պառակտում առաջ բերել, այնպիսի գժտութիւնների հասցնել, որոնք օգնէին նրան հրամայելով (Divide et imrera), բայց որ այդ ուկազը ազգաբնակութեան պիտի վարժեցնէ այն բանի համար, թէ ինչ բան է համարվում օրինականութիւն և արդարութիւն, տակն ու վրա կանէ նրա հասկացողութիւնների մէջ սեփականութեան և իրաւունքի գաղափարը, կը դրդէ նրան կարծելու, որ յափշտակութիւնը օրինական բան է,—դրանում թւում է, որ ոչ մի կասկած լինել չէ կարող»։

—

Նոյն խնդրի առիթով «Вѣкъ» լրագիրը նկատում է.

«Հաւասարի կերպով կարելի է ասել, որ իր նշանակութեամբ գիւղացիութեան համար այդ նոր օրէնքով սահմանված դրութիւնը մի ամբողջ յեղափոխութիւն է հանդիսանում։ Գրչի մի թափով ոչնչացված է դարաւոր հաստատութիւնը—համայնքի սկզբունքը։ Տնտեսական և կեանքի շահերի խճճված հանգոյցները, որ շղկապված են համայնական հողատիրութեան հետ, քակված, կտրված են Ստոլիպինի Վասիլչիկովների պատրաստած կացնով և որը յանձնված է միևնոյն գիւղակի նաչալնիկին, որը 15 տարի շարունակ պաշտպանում էր համայնքի խնամատար իշխանութիւնը։

Մենք չենք կարող մատնացոյց չանել այդ բարենորոգութեան հասարակական վտանգաւոր բնաւորութեան վրա, որը հնարված ու մշակված է գաղտնի և օրինականութիւն է ստանում հակապարլամենտական ճանապարհով, մինչդեռ այդ բարենորոգումները վերաբերում են ժողովրդական կեանքի այնպիսի կարևոր ու բարդ կողմերին, ինչպիսին է համայնական հողատիրութիւնը։ Մենք հաւատացած ենք, որ կառավարութիւնը շատ շուտով հարկադրված կը լինի գործ ունենալ իր հապճեպ կարգադրութեան հետևանքների հետ և ըմբռնել, որ այդպիսի հարցեր լուծելը առանց ժողովրդական ներկայացուցիչների կարող է տալ միայն դառն պտուղներ»։

—

Մօտաւորապէս նոյն խորհրդածութիւններն ու եզրակացութիւնն է անում և «Товарищъ» լրագիրը.

«Հիմք կայ երկիւղ կրելու, որ նոր ագրարական օրէնքը, փոխանակ խաղաղացնելու, հանգստացնելու գիւղը, մեծ պառակտում առաջ կը բերէ, բազմաթիւ վէճերի պատճառ կը դառնայ և կը զայրացնէ գիւղական ազգաբնակութեանը։ Հասկածելի է, որ աղքատութեան մատնվող գիւղացիութիւնը այդքան հեշտ կերպով հաշտվի իր նոր բաղդի հետ։

Իրաւ է, այդ նոր օրէնքը մեծ ուրախութեամբ կընդունվի գիւղական բոլոր «բռունցքների» ու բազմահող գիւղացիների կողմից։ Այդ կողմից օրէնքի ակներև նպատակն—ուժեղացնել գիւղի կօնսերվատիւ մասը—առաջին հայեացքից, թւում է, որ կարելի կը լինի հասնել, բայց դրա հետ միաժամանակ պէտք է բազմանան պրօգրեսիվ կերպով և դժգոհները, օպպօզիցիօն խմբակները։

Հայրենիքի առաջ մեծ պատասխանատուութիւն է իր վրա առնում ներկայ կաբինետը այդ ստեղծած անարդար օրէնքի պատճառով»։

Այդպիսի պատասխանից «անդրդուելի իշխանութիւնը» չէ վախենում, յոյս դնելով այն առածի վրա, որ «յաղթողներին չեն դատում»։ Սակայն կարճ կը լինի տօնել նա իր յաղթանակը։

## ԴԻՏԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Մօտենում են ընտրութիւնները։

Անմիտ բոյկոտը Պետական Դումայի դէմ, ընտրողական veto-ն այլևս չը կայ. նրան շտապեցին վերացնել ասպարէզից իբրև տակտիկական մի սխալ քայլ. այժմ թող ամեն մի հայ, քաղաքացի թէ գիւղացի, օգտվէ իր ձայնի իրաւունքից, կատարէ իր քաղաքացիական պարտականութիւնը, որ նախորդ ընտրութիւնների ժամանակ [illegible] արվեց Դաշնակցութեան բոյկոտաւէր, «հեռատես» ու ժողովրդի «շահերին նախանձախնդիր» շեֆերի կողմից։

Նրանք, վերջապէս, խոստովանեցին այն տարրական ճշմարտութիւնը, որ պարտազանցութիւնը քաղաքացիական հասունութեան ապացոյցը չէ, այլ տհասութեան։

Ապա ուրեմն թող մասնակցի նա, ով ընտրելու և քուէ տալու իրաւունք ունի։ Սակայն հարկաւոր է այդ անել մեծ զգուշութեամբ, գիտակցօրէն, որպէս զի տուած քուէն չը կորչի կամ թէ կարիք չը բերի։

Այդ պատճառով եթէ մէկը տալիս է իր ձայնը, իր քուէն, պարտաւոր է իմանալ՝ ինչու է տալիս և ո՞ւմ է տալիս։

Իսկ այդ իմանալու համար, նախ՝ պէտք է պարզ լինեն դրված մեր ժամանակակից սպասելիքները Դումայից և որոշ արտայայտված մեր րէալ պահանջները։

Որո՞նք են մեզ հայերիս համար այդ սպասելիքները։ Մի՞թէ այն ծայրայեղ պահանջները որ յայտնում են յեղափոխական-սօցիալիստական կուսակցութիւնները. Թւում է, թէ ոչ։

Նրանք, օրինակ, պահանջում են մշտական զօրքի փոխարէն՝ միլիցիա, հողերի խլումը առանց վարձատրութեան։ Այսինքն այնպիսի բաներ, որոնք ոչ միայն վերջնական լուծում չեն ստացել, այլ և մերժված են այնպիսի երկրներում, ինչպէս են հասարակապետական Ֆրանսիան, ազատ Անգլիան և սահմանադրական միւս պետութիւնները։ Հետևապէս կարո՞ղ է, մի՞թէ, աջողութիւն ունենալ ոստիկանական-բիւրոկրատական Ռուսաստանում։

Միևնոյն ժամանակ այդ տեսակ հարցերը կարող են լուծում ստանալ միայն պարլամենտական ճանապարհով, ժողովրդական-սահմանադրական ներկայացուցչութեան միջոցով։

Մինչդեռ հէնց այդ սահմանադրութիւն, պարլամենտ կոչված ամենաէական գործօնը մեզանում դեռ չը կայ և անհրաժեշտ է ձեռք բերել նախ այդ։

Այդպէս հասկացաւ իր դերը Պետական Դուման, այդ ուղղութեամբ էլ նա գործում էր։

Կարճ ժամանակի ընթացքում նա մշակեց մի շարք օրէնքներ քաղաքացիական անհրաժեշտ ու տարրական իրաւունքները ապահովելու և ժողովրդի ազատագրութեան ուղին հարթելու համար։ Եւ չը նայելով որ այդ իրաւունքները Եւրոպայի, Ամերիկայի և մինչև իսկ Աֆրիկայի խուլ անկիւններում ընկած մի քանի ազգութիւններ վաղուց արդէն վայելում են, ռուսաց պետութեան հպատակները, մինչև այժմ էլ զրկված են այդ բարիքից, շնորհիւ այն հանգամանքի, որ Դուման ցրեցին այդպիսի փորձերի համար։

Հասկանալի չէ հապա ինչու, ինչ յատկութիւններով մեր «ծածան» ծայրայեղները թողած ժամանակակից անհրաժեշտ պահանջները, սլանում են դէպի հեռաւոր ապագան։

Ենթադրենք, որ ժողովուրդը տալիս է իր ձայնը այդ ծայրայեղներին, նրանք յաղթանակ են տանում և գնում են Պետական Դումա. ի՞նչ պիտի անեն նրանք այնտեղ և ո՞րն է լինելու նրանց գործելակերպը։

Եթէ նրանք դժգոհ էին առաջին Դումայից, գործելակերպից, նրա տակտիկայից, ապա ուրեմն նրանք աւելի հեռու պիտի գնան իրանց պահանջների մէջ, այսպէս ասած, յեղափոխական «մեծ ակտ» պիտի կատարեն։ Այդ ակտը կը վերջանայ նրանով, որ նրանք Պետական Դուման կը յայտարարեն Սահմանադիր Ժողով և կը սկսեն զբաղվել իրանց միւս ծայրայեղ պահանջների քննութեամբ։

Պարզ բան է, բիւրոկրատական ռեժիմը ձեռքերը չէ ծալելու նստի. նա Դուման նորից կը փակի, և եթէ Վիբորգի կոչը ստորագրելու համար այսօր պատասխանատուութեան են ենթարկվում առաջին պատգամաւորները, յեղափոխական «մեծ ակտի» համար աւելի վատթար կերպով կը վարվեն։

Իսկ ինչ կարող է անել դրա դէմ Դուման, ինչպիսի զէնքով պիտի պաշտպանէ իր իրաւունքներն ու պահանջները. պարզ է. ընդհանուր զինված ապստամբութեամբ։

Ենթադրենք, որ կազմակերպված բանւորական մասսան արձագանք կը տայ այդ ապստամբական կոչին. իսկ ինչ յոյս կայ կարծելու, որ 90 % գիւղացիութիւնը և բուրժուազիան կը հետևեն այդ օրինակին։ Եւ պարզ բան է, մասնակի ոյժերով կանոնաւոր չը յեղափոխված զօրքի դէմ կռիւ մղել անկարելի է։ Այդպիսի կռիւը ձեռնտու և նպաստաւոր կը լինի յամենայն դէպս ոչ ժողովրդի ազատագրութեան համար։

Հետևապէս այդպիսի ապստամբութիւնը լինելով անհամապատասխան ոյժերի իրական դասաւորութեանը, յարաբերական չափին, որ աւելի սոսկալին է, անմիջապէս կը նպաստէ բէակցիայի ուժեղացմանը և պարլամենտական գաղափարի վարկաբեկմանը։

Տանք արդեօք մեր ձայնը, մեր քուէն դէպի այդ տեսակ կատաստրոֆաները առաջնորդող ծայրայեղներին, որոնք շփոթում են հեռաւոր ապագայում իրականալիքները մերձաւորի անհրաժեշտ պահանջների հետ։—Ո՛չ։

Ինչու համար տալ։

Ասել՝ միայն Դումա գնալու համար,—դա բաւարար պատասխան չէ։ Չէ՞ որ Դումայի նշանակութեան ու կոչման մասին տարբեր կարծիքներ կան։

Այն ժամանակ, երբ ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը և ուրիշ ձախակողմեաններ Դումայի վրա նայում են իբրև ժողովրդական ներկայացուցչութեան, սահմանադրական մի մարմնի, մի առաջնակարգ հաստատութեան վրա, մեր Դաշնակցութեան լէյբ-օրգանը համարում է նրան «խօսարան», «անել փողոց»։ Ապա ուրեմն ինչ արժէք պէտք է ունենայ յիշեալ կուսակցութեան համար Պետական Դուման, այդ, թէև անկատար, ժողովրդական ներկայացուցչութիւնը։

Ի նկատի առնելով այն թիւր ու անհեթեթ տեսակէտը, այն վայրի վերոյ կարծիքները, որ նրանք տարածում են ազգաբնակութեան մէջ Դումայի վերաբերմամբ, պէտք է կարծել, որ նա գնալու է միայն խաղալու ու խանգարելու համար, նա պէտք է գնայ «ներսից պայթեցնելու» նրան և ապարդիւն դարձնելու ժողովրդի ներկայացուցիչների գործունէութիւնը։ Դա նրանց երէկվայ ու այսօրվայ լօզունգն է։

Տալով մեր ձայնը, մեր քուէն այդպիսիներին՝ նշանակում է հաւանութիւն տալ նրանց անհեթեթութիւններին և ռէակցիայի յաղթանակելուն։

Ժողովրդի ազատագրութեան գործը դրանից շահ չունի։

Եւ մեր ուզածը այդ չէ։

Աշխատակից

## ՄԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՍՏՈԼԻՊԻՆԻ ՀԵՏ

Պարլամենտարիզմի մասին Ստոլիպինի յայտնած թիւր կարծիքի առիթով ծագած վէճը նոր էր սկսել մի փոքր դադարել, այժմ էլ ասպարէզ է գալիս մեր մինիստրների խորհրդի նախագահի մի ուրիշ աւելի տարօրինակ և ուշագրաւ սահմանադրական թէօրիան։ Այդ թէօրիան նա արտայայտել է մի բարձրաստիճան անձի հետ խօսելիս։ Պրեմիէր-մինիստրը, «Страна» լրագրի ասելով, այդ թէօրիան ձևակերպել է հետևեալ կերպով.

«Եթէ անցեալ տարի կոմս Վիտտէն նշանակութիւն էր տալիս այսպէս ասած հասարակական կարծիքի ոյժին, ի դէմս զանազան դաշնակցութիւնների և խորհուրդների, ինձ համար այդ խրտուիլակը գոյութիւն չունի»։

«Հասարակական կարծիքի խրտուիլակը» չէ կարող ազդել մինիստրի վարմունքի վրա, որովհետև ոչ թէ հասարակութիւնը պէտք է պայմանաւորէ կառավարութեան քաղաքականութիւնը, այլ ինքը հասարակական կարծիքը պէտք է լինի այնպէս, ինչպէս որ մինիստրն է ցանկանում։

«Մեր ոյժը ազգաբնակութեան ընդարձակ մասսաների խորին անխախտ կօնսերվատիզմի մէջն է գտնվում։ Դա ինձ հաստատ հիմք է տալիս կարծելու, որ երկրորդ Պետական Դուման կը լինի ճիշտ այնպէս, ինչպիսին որ ես եմ ցանկանում»։

Ի՞նչ միջոցներով է ստացվել այդ կօնսերվատիզմը։

Դեռ ևս անցած տարի հասարակութիւնը համարվում էր օպպօզիցիօն։ Մինչդեռ Ստոլիպինը հաստատ և որոշ կերպով պատասխանում է. «Մարտական, օպպօզիցիօն հասարակութիւն ինձ համար չը կայ և չէ կարող լինել»։

«Այն օրից երբ պետական իշխանութիւնը վճռել է, որ ինքը իշխանութիւն է և ուրիշ բան էլ լինել չէ կարող, ամենքը անմիջապէս թագնվեցին իրանց բներում։ Ես հաւատացած եմ, որ միայն որևէ մէկի հոգատար բարեհաճ վերաբերմունքը կարող է վերացնել այդ խրտուիլակը»։

Օպպօզիցիան «բների մէջ» է թաքնված, «հասարակական կարծիքի խրտուիլակը» այլ ևս չը կայ, երկրորդ Պետական Դուման կը լինի այնպէս, «ինչպիսին որ ես եմ ուզում», ապագան լուսաւոր է և խաղաղ։ Սակայն իսկական պետական մարդու համար, որը հասկանում է որ ինքը «իշխանութիւն է և ուրիշ բան չի էլ կարող լինել»,—զանազան պատահականութիւններն էլ կարևոր նշանակութիւն պէտք է ունենան և նա նրանց միշտ էլ պէտք է ի նկատի առնէ։

«Կառավարութիւնը կանգ չի առնի արձակելու առաջ, թէկուզ նոյնիսկ գումարման երկրորդ օրը, եթէ որ Դուման լիովին համապատասխան չը լինի իր կոչմանը—աշխատանքի ընդունակ հաստատութեան։ Մի այդպիսի անաջողութիւն ոչ մի դէպքում չէ կաբող համարվել իբրև իմ տակտիկայի աննպատակայարմարութիւն։ Եթէ ինձ հնարաւորութիւն չը տան գործը տանել մինչև վերջ, ես կը հաւաքեմ երրորդ Դումա և երաշխաւորում եմ, որ նա կը լինի անպայման նոյնը, ինչ որ հարկաւոր է Ռուսաստանը, վերջապէս, օրինական կազմի ճանապարհի վրա դնելու համար»։

Ահա այն սահմանադրական իրաւունքի գլխաւոր հիմունքները, որով ուսուցանում է մեզ մինիստրների խորհրդի նախագահը։ Հասարակական կարծիքը պէտք է քշվի դէպի «իրանց բները»։ Իսկ եթէ նա այնտեղից դուրս կը գայ և կը կազմակերպէ անհամապատասխան Դումա (ինչպէս որ այդ կը լինի այն ժամանակ, երբ «որևէ մէկի հոգատար բարեհաճութիւնը կարող կը լինի նորից վերածնել այդ խրտուիլակը»), եթէ որ Դուման դարձեալ կը փորձէ արտայայտելու հասարակական կարծիքը, հարկաւոր է շարունակել միևնոյն «խրտուիլակը» ոչնչացնելու և «բների մէջ» քշելու քաղաքականութիւնը։ Այդ թէօրիայի մէջ նկատվում է պրինցիպների անկասկած հաստատութիւն և ղեկավարող հիմունքների հետևողականութիւն, բայց նրա ամենագլխաւոր յատկութիւնը նրա հայեացքների պարզութիւնն է պետական կառավարութեան վերաբերմամբ։ Նրանում ինչ-որ «խակական ռուսական» մի բան կայ, վճռական ու անդրդուելի. Մի Դուման լաւ չէ, կը ցրենք նրան, կը գումարենք մի ուրիշը, այն էլ դուր չի գալ, կանգ չենք առնի, և տեսնենք ինչպէս կը լինի երրորդը, և այդպիսով մենք մեր ուզածը կանենք, կը հասնենք մեր նպատակին, իսկ օպպօզիցիան կը թաքցնէ իր դէմքը։

Այդ թէօրիայի մէջ ամեն բան, ի հարկէ, լաւ է, բացի սկզբից ու վերջից։ Նախ չէ ապացուցված Դումայի գոյութեան անհրաժեշտութիւնը այն դէպքում, երբ հասարակական կարծիքը արհամարհվում է։ Երկրորդ՝ այն երջանիկ ժամանակը, երբ, վերջապէս, կը հրաւիրվի մի այնպիսի Դումա, «ինչպէս ես եմ ուզում», և երբ «խրտուիլակ»-ները ոչնչացնելու համար անհրաժեշտ միջոցները թուլանալու լինեն, արդեօք, դուրս չի՞ գալ օպպօզիցիան իր բնից։ Կարելի չէ՞ լինի նոր ջանքերի, այդ «խրտուիլակների» ոչնչացնելու համար։

Եթէ այդ երկու կէտերը չը լինէին, անշուշտ Ստոլիպինի քարոզած նոր ուսմունքը սահմանադրական պետութեան մասին, որի ներկայացուցիչները պէտք է լինեն «ես ուզում եմ»-ի համաձայն, կարող էր նշանաւոր տեղ բռնել այդ առարկայի վերաբերեալ դասագրքերի մէջ։ («Р. В.»)

## ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

V

### Միապետական և պարլամենտական աբսոլիւտիզմ

(Շարունակութիւն)

Անգլիական խոշոր հողատէրերի մեծամասնութիւնը առաջ էր եկել ոչ-արիստոկրատիային պատկանող ճարպիկ մարդկանցից, որոնք արդէն ըմբռնել էին կապիտալիզմի ոգին։ Նրանք աշխատում էին իրանց կալուածները կապիտալիստական եղանակով շահագործել կապալառուների միջոցով, նրանք անպատւաբեր չէին համարում առևտրական գործերը և հասկանում էին, որ պէտք է բուրժուազիային, մանաւանդ հարուստ բուրժուազիային գնահատել։ Նրանք հարստանում էին հենց կօլօնիական քաղաքականութեան մէջ մասնակցելով։ Կուտակված հարստութիւնները նրանք գործ էին ածում իրանց կալուածները ընդարձակելու և աւելի ու աւելի բարեկարգելու վրա։ Ճիշտ այն դարում, երբ ֆրանսիական արիստոկրատիան կատարելապէս սնանկացաւ, անգլիականը մի շատ մեծ դրամական ոյժ դարձաւ։ Անգլիական արիստոկրատիան, նոյնչափ եռանդուն և գործունեայ լինելով, ինչպէս և այն ժամանակվայ բուրժուազիան էր, ոչ միայն իր անձնական գործերով էր զբաղվում, այլև ամենաեռանդուն մասնակցութիւնն էր ցոյց տալիս պետական գործերում։ Ամեն տեղ, ուր հնարաւորութիւն կար, արիստոկրատիան իր ձեռքում պահեց պետութեան վարչական գործերը, որի շնորհով բիւրոկրատիան Անգլիայում աւելի շատ զարգացաւ, քան եւրոպական ներկայ պետութիւններից որևէ մէկում։ Միևնոյն ժամանակ նա հասկանում էր, որ պետութիւնը վարած ժամանակ պէտք է և խոշոր բուրժուազիայի շահերը ի նկատի ունենալ, որին նա այնքան մօտ էր զգում իրան։

Անգլիական հողային արիստոկրատիան, շնորհիւ իր վերոյիշեալ յատկութեան, 15-րդ և 17-րդ դարերում, շատ աւելի երկար պահպանվեց, քան մի այլ որևէ երկրի արիստոկրատիան, և միևնոյն ժամանակ Անգլիայի կապիտալիստական բուրժուազիան էլ մասնաւորապէս արագ զարգացաւ։

Այդ երկու դասակարգերը անյաղթելի ոյժ դարձան շնորհիւ իրանց դաշնակցութեան, որ նրանք կապեցին այնպիսի նպաստաւոր պայմաններում, որ գոյութիւն ունէին Անգլիայում։ Եւ թագաւորական իշխանութիւնը ստիպված էր խոնարհվել նրանց առաջ և նրանց ներկայացուցչութեան՝ պարլամենտի առաջ։

Ծայրագոյն արևմուտքում կատարված հասարակական յարաբերութիւնների զարգացման ընթացքի ճիշտ հակառակն ենք մենք տեսնում Եւրոպայի արևելքում, Լեհաստանում։ Այնտեղ էլ արիստոկրատիան յաղթեց թագաւորական իշխանութեանը, այնտեղ էլ այս վերջինին չաջողվեց զեմսկի իշխանաւորների ժողովների վրա տիրապետութիւն ունենալ։ Սակայն լեհական կայսրութեան ժողովը (սէյմը) բոլորովին այլ սօցիալական հիմունքների վրա էր հիմնված, քան անգլիական պարլամենտը։ Լեհաստանում հողային արիստոկրատիան անսահման իշխանութեան հասաւ հասարակական յարաբերութիւնների յետամնացութեան շնորհով։ Առևտրական ճանապարհների փոփոխութիւնները,—որ տեղի ունեցան դէպի Հնդկաստան ծովային ճանապարհ գտնելու պատճառով,—նոյնպէս և թուրքերի առաջխաղացութիւնը Լեհաստանին շատ աւելի մեծ վնաս հասցրեցին, քան թէ Գերմանիային։ Լեհական բուրժուազիան կատարելապէս ընկաւ, նա այլ ևս չը կարողացաւ կռիւ մղել արիստոկրատիայի գերազանց ոյժերի դէմ։ Ֆեոդալական անարխիայի զարգանալուն խանգարող բոլոր արգելքները հեռացան։ Թագաւորը ոյժ չունէր կայսրութեան ժողովի առաջ, այս վերջինը ոյժ չունէր արիստոկրատիայի առանձին ներկայացուցիչների առաջ, որոնցից իւրաքանչիւրը իրան բռնում էր իբրև մի անկախ թագաւոր։ Զեմսկի իշխանաւորների ժողովների այն առանձնայատկութիւնը, որ նրանք՝ այդ ժողովները, որոշելով գործերը ոչ թէ ձայների մեծամասնութեամբ, այլ միաձայնութեամբ, ծառայում էին միմիայն կարծիքների մէջ համաձայնութիւն կայացնելու համար, ոչ մի տեղ այնպէս խիստ կերպով չարտայայտվեց, ինչպէս լեհական սէյմում, որտեղ մէկ հատ պատգամաւորի veto-ն ամեն մի որոշում վաւեր էր դարձնում։

Բոլորովին տարբեր բնաւորութիւն էին կրում զեմսկի իշխանաւորների ժողովները Անգլիայում, որտեղ արիստոկրատիայի ոյժի գերակշռութիւնը թագաւորական իշխանութեան վերաբերմամբ հիմնված էր նրա վրա, որ խոշոր հողատիրութիւնը յարմարվել էր արդիւնաբերութեան կապիտալիստական եղանակին և միացել էր կապիտալիստների դասակարգի հետ։ Ժամանակակից պետութեան առաջացնելու և կենտրոնացնելու տենդենցիաները նոյն չափով երևան եկան Անգլիայում, ինչպէս և արևմտեան Եւրոպայի միացեալ միապետութիւններում։ Այդ տենդենցիաները այստեղ էլ, ճիշտ այնպէս, ինչպէս և Ֆրանսիայում, առաջացրին կենտրոնական իշխանութեան անպայման տիրապետութիւնը, որը թոյլ չէր տալիս ոչ մի ընդիմադրութիւն, ոչ մի քննադատութիւն։ Անգլիայի և Ֆրանսիայի միջև եղած տարբերութիւնը միայն նրա մէջ էր կայանում, որ Ֆրանսիայում բացարձակ կենտրոնական իշխանութիւնը պատկանում էր թագաւորին, իսկ Անգլիայում՝ պարլամենտին *)։

Քանի թագաւորական իշխանութեան և պարլամենտի միջև մղվող կռիւը աւելի էր զօրեղացնում այս վերջինի իշխանութիւնը, քանի առանձին համայնքներն ու քաղաքները ձուլվում, մի ազգ էին կազմում, այնքան էլ պարլամենտի էական գծերը փոխվում էին։ Իւրաքանչիւր պատգամաւոր դադարեց իրան մի առանձին տերրիտօրիայի կամ առանձին կորպորացիայի ներկայացուցիչ զգալ և այլևս իր ազդեցութիւնը չէր համարում իբրև ուղղակի հետևանք իրան պարլամենտ ուղարկող տերրիտօրիայի կամ կորպորացիայի ունեցած ազդեցութեան։ Պարլամենտը այլևս իրանից չէր ներկայացնում իբրև անկախ իշխանաւորի (կամ բարձրագոյն կազմակերպութիւնների ներկայացուցիչների) մի ժողով, այլ նա այլևս մի ամբողջութիւն դարձաւ. իր ամբողջութեամբ նա ամեն բանի տէրն էր հանդիսանում և պետութեան մէջ ամեն մի իշխանութեան աղբիւրն էր իրանից ներկայացնում։ Սակայն պարլամենտի գերիշխանութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ նրա մէջ եղած մեծամասնութեան գերիշխանութիւնը։ Համայնքների և տերրիտօրիաների տնտեսականապէս ու քաղաքականապէս անկախութիւնը պետութիւնից ոչնչանալով, ոչնչանում է և առանձին պատգամաւորների ինքնուրոյնութիւնը պարլամենտում։ Պարլամենտական փոքրամասնութիւնը պարտաւոր է նոյնպէս անպայման կերպով հնազանդել մեծամասնութեանը, ինչպէս և ամբողջ երկիրն էլ պարտաւոր է պարլամենտին հնազանդել։ Պարլամենտական մեծամասնութեան կամքը դառնում է բարձրագոյն օրէնք. Լիւդովիկ XIV-րդի նման, մեծամասնութիւնը կարող է ասել. պետութիւնը ես եմ։ Թագաւորներն ու մինիստրները նրա ստրուկներն են դառնում։

Եւ այդ ստրուկները, ինչպէս և բոլոր ուրիշները, թէև երբեմն կարողանում էին ազդեցութիւն բանեցնել (մեծ մասամբ ամենաստոր միջոցներով) իրանց տէրերի վրա և ուղղել նրանց գործունէութիւնը, համաձայն իրանց սեփական շահերի, բայց և այնպէս, այդպիսի միջոցներով ձեռք բերված ստրուկի ազդեցութիւնը իր տիրոջ վրա մազաչափ չէ փոխում նրանց յարաբերութիւնների էութիւնը։

Պարլամենտի մեծամասնութիւնն ու փոքրամասնութիւնը, XVII-դ դարից սկսած, միաձոյլ կուսակցութիւնների են փոխվում. վիգերը և տօրիները **)։

Նախկին դասային ժողովների օրով պետութեան մէջ անկարող էին միաձոյլ կուսակցութիւններ գոյութիւն ունենալ. տեղական կորպորատիվ շահերի միմեանցից գերակշիռ լինելու պատճառով ոչ միայն պետութեան ամբողջ կազմը, այլ և նրա մէջ կազմվող կուսակցութիւնների կազմը պէտք է որ չափազանց անհաստատ լինէին։ Վերջինները նոյն իսկ անդադար փոփոխվում էին։ Արդիւնաբերութեան արդի եղանակը և արդի պետութիւնը պէտք է նախ յաղթած լինէին դասերը, ցեխերը, համայնքները և այլն առանձնայատկութիւնները, որպէս զի միևնոյն երկրում ապրող և միևնոյն դասակարգի անդամները իրանց դասակարգային ընդհանուր շահերի գիտակցութեանը հասնէին, որպէս զի կարելի լինէր այնպիսի դասակարգեր կազմել, որոնք կարողանային այս ինչ ազգի մէջ եղած իրանց բոլոր անդամներին միմեանց հետ միացնել, իսկ այդ ազգային դասակարգերի և դասակարգային շահերի հիման վրա էլ մշտական միաձոյլ կուսակցութիւններ կազմել։

Բայց որչափ մեծ ազդեցութիւն և ոյժ է ձեռք բերում պարլամենտը, որչափ նա աւելի է իրան հպատակեցնում պետական իշխանութիւնը, այնչափ էլ աւելի մեծ է լինում պարլամենտական այն կուսակցութեան վաստակը, որը կաջողի մեծամասնութիւն դառնալ։ Այդ է պատճառը, որ քաղաքական գործիչները մեծ ջանքեր են թափում մէկ կուսակցութեան մէջ ամփոփել այն բոլոր տարրերը, որոնք իրանց ընդհանուր նպատակներով միանում են, թէև երկրորդական խնդիրների վերաբերեալ նրանք շատ էլ տարակարծիք լինեն։ Եւ այդ է պատճառը, որ մարդիկ ամեն կերպ աշխատում են երկրորդական խնդիրների վերաբերեալ եղած կարծիքների տարբերութիւնը խեղդել։ Այդ բոլորի հետևանքն է կուսակցական դիսցիպլինան, «կուսակցական բռնակալութիւնը», պարլամենտական միահեծանութեան հետ միաժամանակ առաջ է գալիս և կուսակցական մեծամասնութեան միահեծանութիւնը։

Սակայն, այդ «բռնակալութիւնը» և այդ «տերրորիզմը» միմիայն պարլամենտարիզմի առանձնայատկութիւնները չեն։ Դրանք նկատվում են ամենուրեք, ուր որ աւելի կամ նուազ թւով համախմբված մարդիկ լուրջ կռիւ են մղում, ուր որ յաղթութիւն կարելի է տանել միմիայն, երբ կուսակցութեան բոլոր անդամները սեղմված շարքերով և միահամուռ կերպով են գործում միևնոյն ուղղութեամբ։ Ոչինչ այնքան ծիծաղելի չէ, քան այն շանթերը, որ արձակվում են պրոֆեսիոնալ միութիւնների տերրորիզմի դէմ այն լիբերալ պօլիտիկոսների կողմից, որոնք հենց իրանք են տանջւում կուսակցութիւնների ֆրակցիաների լուծի տակ։ Բայց նոյնչափ և զուարճալի է, երբ անարխիստները զովաբանում են պրոֆեսիոնալ միութիւնները, իբրև «ազատութեան» յենարանի, այսինքն՝ անարխիստական թափթփածութեան, հակառակ պարլամենտական «բռնակալութեան»։

Ազատութիւն այն մտքով, ինչպէս որ անարխիստներն ու լիբերալներն են նրան հասկանում, գոյութիւն չունի ոչ պրոֆեսիոնալ միութիւնների և ոչ էլ պարլամենտական կուսակցութիւնների մէջ։

---

*) Պարլամենտի ամենակարող լինելը շատ լաւ կերպով բնորոշվում է անգլիական առակով. «Պարլամենտը ամեն բան կարող է անել, նա չէ կարող միայն տղամարդին կին դարձնել»։ Ծ. Հ.

**) Վիգի և տօրի անուններով կոչվում են անգլիական պարլամենտի երկու մեծ կուսակցութիւնները։ Ծ. Թ.

---

## ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Շուլաւէր, նոյեմբերի 20-ին

Ամսիս 18-ին ուսուցչական խումբը, մի քանի տեղացիների մասնակցութեամբ, ուսումնարանի դահլիճում բեմի ու չքաւոր աշակերտուհիների օգտին ներկայացրեց Շիրվանզադէի «Պատւի համար» պիէսը։ Դահլիճը լիքն էր ծայրէ ծայր։ Խաղը անցաւ շատ լաւ։ Մարգարիտի դերում շատ հրաշալի էր, ու համարձակ կարելի է ասել, փայլեց ուսուցչուհի օրիորդ Սաթենիկ Տէր-Միքայէլեան. Մնացած դերակատարներն էլ վատ չէին։ Ամսիս 21-ին պ. Վրույրը խաղալու է «Ղարաբաղի աստղագէտը»։

## ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ

Նոյեմբերի 19-ին

Սեպտեմբերին մեր դպրոցները բացվելիս 400-ից աւել երեխա աշակերտներ դուրս մնացին դպրոցներում տեղ չը լինելու պատճառով։ Դուրս մնացած երեխաների ծնողները Փրկչի դպրոցի առաջ ստուար բազմութեամբ սպառնում էին չը թողնել ուսումը շարունակվելու, եթէ իրանց երեխաներին էլ չը տեղաւորեն դպրոցներում։ Սպառնալիքը մեծ էր, պահանջը արդարացի։ Մի քանի ապակիներ նոյնիսկ փշրեցին։

Անձեռնահասներից ժողովներ կազմվեցին ուպրավայում։ Անմեղ երեխաների բաղդից քաղաքագլուխը բացակայում էր քաղաքից, եթէ նա այդ ժամանակ քաղաքում լինէր, մենք հաւատացած ենք, որ այդ գործը գլուխ կը գար և 400-ից աւելի երեխաներ այս րօպէիս դուրս չէին մնայ։ Ամեն բանի մէջ հարկաւոր են ձեռներեց, հաստատակամ և սրտացաւ մարդիկ։

Երբ ուպրավայի ժողովների անպտուղ լինելը պարզվեց, ժողովներ գումարվեցին դպրոցներում և հետևանքն աւելի անպտուղ դուրս եկաւ։ Այդտեղ վճռեցին ծխականներից մարդիկ ընտրել, որոնք յայտնի չէ թէ ինչ իրաւունքով պիտի ժողովարարութիւն անէին նոր բացվելիք դպրոցների համար։ Եւ ամենից ծիծաղելին այն է, որ եթէ այդ ընտրվածները կարողանային մի որևէ գումար հաւաքել, ում պիտի յանձնէին և ով պիտի գլուխ անցնէր նոր դպրոցներ բանալուն։—Հին հոգաբարձութիւնը։—Ուրեմն աւելորդ էր փող հաւաքելու համար նոր մարդիկ ընտրելը։

Մենք գուցէ մի կերպ հաշտվենք Փրկչի դպրոցի յարգելի հոգաբարձութեան համայնական փողերն այդ տեսակ ծախսելու հետ, որը բոլորովին ապօրինի է. մենք գուցէ հաշտվենք, կրկնում ենք, աչքի առաջ ունենալով մեր սօցիալական պայմաններն ու ոչնչի տեղ գոնէ մի բան առաջացնելը։

Բայց չենք կարող հաշտվել նոյն դպրոցի պ. աւագ ուսուցչի այն եզուիտական արարքի հետ, որով նա խաբեց դուրս մնացած երեխաների յուզված ծնողներին։ Ո՞ւր են, պ. աւագ ուսուցիչ, ձեր տափակ-տափակ խոստումները ու հաւատացումները։ Նոյեմբերն արդէն անցնում է, հրապարակի վրա ոչինչ չը կայ։ Մենք ակամայ գալիս ենք այն եզրակացութեան, որ դուք այն ժամանակ աւելի շատ վախենում էիք ձեր աթոռիկը կորցնելուց, քան յուզված ժողովրդից։ Այնքանը պարտք ենք համարում ձեզ յիշեցնել, որ դուք պատրաստ էիք նոյնիսկ ստորագրութիւն տալու, որ մեր երեխաներին ամենաշատը մինչև նոյեմբեր անպատճառ տեղաւորած կը լինէք դպրոցներում։ Կարո՞ղ էք պատասխանել. փորձեցէք։

Նախօրօք գուշակելով ժողովրդի կեղծ բարեկամ, ինքնակոչ «տէր ու անօրէնների» արդարացուցիչ ու անօգուտ պատասխանը՝ կոչ ենք անում ձեզ, Ալէքսանդրօպօլի բանիմացներ. այդ ուղղակի ձեր բոլորիդ պարտականութիւնն է, առաւել ևս ձեր, որոնց որդիները սովորում են այդ դպրոցներում։ Լաւ հասկացէք, որ դպրոցների միջոցները միայն սովորողների համար ծախսելը շահագործութիւն է դուրս մնացած երեխաներին. այդ միջոցները բոլորին են պատկանում և մենք լիակատար իրաւունք ունենք պահանջելու, որ մեր զաւակներին չը զրկէք։ Ինչ անենք, որ մեր մեծամասնութիւնը այրի կանայք և բոռ ու քաչալ խեղճ մարդիկ ենք։ Մենք նոյնպէս սիրում ենք մեր երեխաներին և չենք կամենում, որ մեր զաւակները անգրագէտ մնալով շահագործվեն ձեր սիրասուններից։

Քաղաքագլուխն այժմ այստեղ է, նրա պարտականութիւնն է գլուխ անցնել այս մեծ գործին։ Աւելի լաւ է գիշերները գազային լուսաւորութիւնից զրկվել, քան թէ ցերեկները տգիտութեան խաւարի մէջ խարխափել։

Վարդ.

## ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Նոյեմբերի 17-ին

Ծխական ընդհանուր տուրքերի գեղեցիկ սկսուածքը ջուրն ընկաւ։ Սահմանված տուրքերը հին հոգաբարձութիւնը չը կարողացաւ ժողովել. նոր հոգաբարձութիւնն էլ թէ չը կամեցաւ և թէ հրաժարվեց։ Տուրքերը չը ժողովվելու մէջ մեծ աշխատանք ունեցան մի կարգի մարդիկ, որոնք ի բնէ կոչում ունեն ամեն գեղեցիկ բանի դէմ խոչընդոտներ յարուցանելու։

Եկեղեցու և դպրոցի նիւթական դրութիւնները անմխիթարելի են։ Յունիս ամսից եկեղեցու պաշտօնեաները ռոճիկ ստացած չեն. անցեալ տարուայ ուսուցիչներից կան, որ դեռ սպասում են ամառային ամիսների ռոճիկներին։ Մեծ դժուարութիւններից յետոյ վերջապէս հազիւ աջողվեց ամսիս 12-ին և 19-ին ծխական ժողովներ գումարել նեղ դրութիւնից դուրս գալու համար։ Նորընտիր հոգաբարձութիւնը չորս անգամ հրաւէր կարդաց ծխական ժողով գումարելու. հազիւ հազ աջողվեց հոկտեմբերի վերջերին մի ժողով գումարել. այս էլ ցրվեց առանց որևէ վճիռներ կայացնելու։ Վերջապէս վերջին ժողովներում վճռվեցին ա. բաժանել եկեղեցու կասսան դպրոցի կասսայից, բ. ընտրվեց յանձնաժողով, որ աշխատէ հաւաքել ապառիկ մնացած ծխական տուրքերը ու վճարել եկեղեցու պաշտօնեաների ռոճիկները, գ. այսուհետև դառնալ հին սիստեմին, այն է՝ ստանալ ծխական արարողութիւնների համար որոշված տուրքերը և պահել ռոճիկի ու եկամուտների այն եղանակը, որ եղել է Բաթումում վերջին տարիներս, դ. յանձնվեց դպրոցի հոգաբարձութեան հոգալ վճարելու անցեալ տարեշրջանի ուսուցիչների ապառիկ մնացած ռոճիկները։

Վերջին ժողովը զբաղվեց նոր երեսփոխի ընտրութեամբ։ Հին երեսփոխ Քրիստափոր Դանիէլեանի երեք տարուայ ժամանակամիջոցը լրացած էր. եղան առաջարկներ նրան վերընտրելու։ Գաղտնի քուէարկութիւնից (որից հրաժարվեց պ. Դանիէլեան) յետոյ երևաց ընտրված պ. Լևոն Պօպովեան։ Այդ ժողովին նախագահող հայր Մելքոն առաջարկեց Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի մահվան առթիւ ցաւակցական հեռագիր ուղարկել Թիֆլիսի Թեմական առաջնորդին։ Անմիջապէս խմբագրվեց և հ. Մելքոնի ու պ. Դանիէլեանի ստորագրութեամբ ուղարկվեց հետևեալ հեռագիրը. «Թիֆլիս, Թեմական առաջնորդին հայոց. Բաթումի հայ հասարակութիւնը, վշտացած մայրենի եկեղեցու առաջնակարգ ներկայացուցիչներից մէկի՝ սրբազան Սեդրակեանի կորուստով, արտայայտում է իր խորին ցաւակցութեան զգացմունքը»։ Դրանից յետոյ հարց դրվեց ծխական ժողովի կողմից բողոքելու Էջմիածնում Սուքիաս եպիսկոպոսի նկատմամբ հայ խուժանի կողմից կատարված զազրելի բռնութիւնների դէմ ու պահանջելու անաչառ քննութիւն։ Սրա դէմ ոմանք պահանջեցին բողոք յայտնել թէ Սուքիաս եպիսկոպոսի և թէ Վեհափառ Կաթողիկոսի դէմ գործված բռնութիւնների մասին։ Ծխականները չը համաձայնեցին, առարկելով որ Վեհափառի դէմ միաբանների ոմանց կողմից ենթադրական բռնութիւնները եթէ տեղի ունեցած էլ լինէին, դարձեալ անհանդուրժելի պիտի մնար Վաղարշապատցիների գործած անլուր խայտառակութիւնը։ Իբրև հաշտեցուցիչ ճանապարհ առաջարկվեց բողոքել կատարված բռնութիւնների դէմ առանց յիշելու Սուքիասի և Կաթողիկոսի անունները և կտրուկ կերպով պահանջել անաչառ քննութիւն։ Սրան էլ չը համաձայնեցին հայոց ազգի ազատութեան քաջարի զինուորները. ուստի վճռվեց թողնել, որ ովքեր ինչպէս կամենում են, այնպէս խմբագրեն և իրանց կողմից ուղարկեն հեռագիրը։

* *

## ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

Նոյեմբերի 15-ին

Կարդալով Մշակի № 250-ում Գրիգոր Մէլիքսեդեկեան ստորագրութեամբ նամակը, որի մէջ ասում է «Սրանից երկու շաբաթ առաջ այգիների ճանապարհին սպանեցին անյայտ մարդիկ գիւղիս ինտելիգենտ և ամենից յարգված երիտասարդ Կարապետ Թոթոլեանցին։ Ամսիս 5-ին հինգ անյայտ չարագործներ զինված ատրճանակներով, մտնում են տեղիս առևտրական Դիոնիսիոս Մուշեղեանցի տունը գիշերը և պահանջում են 500 րուբլի։ Երէկ, ամսիս 7-ին էլ, դարձեալ սրիկաների մի խումբ ծակում է պատը և կողոպտում Սահակ Զաքարեանցի շորեղէնի խանութը տանելով մօտաւորապէս 800 րուբլու ապրանք։» Կարդալով այդ լուրը, չենք կարող մատների արանքով նայել այդ վերին աստիճանի զրպարտիչ և անպատկառ լուրի վրա, որով լրատուն ուզում է «Մշակի» վարկը գցել հասարակութեան առաջ, կամ պ. պ. Կ. Թոթոլեանցի, Դ. Մուշեղեանցի, Ս. Զաքարեանցի պատիւն կպչել։ Մենք զարմանում ենք, թէ որպիսի անխիղճ և անպատկառ մարդիկ կան, որոնք իրանց անձնական նախանձների համար շահագործում են լրագրութեան էջերը և թոյլ են տալիս իրանց անխիղճ կերպով ուրիշների պատւի հետ հանաք անել, զոհացում տալով իրանց ցածր հոգուն և ստոր ցանկութիւններին։ Մենք երբ կարդացինք վերոգրեալ վերին աստիճանի պոչաւոր սուտը չը կարողացանք համբերել և բարոյական պարտք համարեցինք անձամբ ստուգելու այդ հաղորդած լուրը, և հաւաստի աղբիւրներից իմացանք, որ վերոյիշեալ նամակ և ոչ մի կէտը ուղիղ չէ։ Նախ, պ. Կարապետ Թոթոլեանցը ինտելիգենտ ոյժ չէ կազմում Վաղարշապատում և սպանված չէ։ Երկրորդ, պ. Դ. Մուշեղեանցի հետ այդպիսի դէպք չէ պատահել, նրա տունը զինված մարդիկ չեն մտել փող կորզելու նպատակով և ոչ մի կօպէկ չէ տուել իր անձը ազատելու համար։ Երրորդ, պ. Ս. Զաքարեանցի խանութը չեն ծակել և չէ կորել նրա խանութից մի քառորդ արշին չիթ անգամ։ Չորրորդ, Գրիգոր Մէլիքսեդեկեան անունով յայտնի գրագէտ անձնաւորութիւն չը կայ Վաղարշապատում, որ գրէր վերոյիշեալ նամակը։

Այսպէս ահա դուրս են եկել նոր սրիկաներ, որոնք ուրիշների պատիւը վարկաբեկ անելու համար դիմում են այս տեսակ ստոր և զզուելի միջոցների։ Ամօթ է, պարոններ. վերջապէս պէտք է ձեռք քաշէք այդ տեսակ ցած միջոցներով ուրիշի պատիւը վարկաբեկ անելուց, թէ՞ ոչ։

Գ. Աղաբաբեանց

## ՄԻ ԿԱՐԾԻՔ

(Նամակ խմբագրութեան)

Վերջին տխուր դէպքերը Էջմիածնում, անկասկած, ամեն մի սրտացաւ ու գիտակից հայի համար ևս դառն են և չափազանց անախորժ. երևի իւրաքանչիւր ոք այժմ անձնատուր է եղած այն տխուր մտքերին, թէ այսպէս շարունակել չէ կարելի, թէ մեր ազգային կենտրոնի այս անկարգ դրութեանը պէտք է, ինչպէս հարկն է, վերջ դնել իր ներքին կամայականութիւններով և արտաքին բռնութիւններով, որովհետև սրա կանոնաւորումից է կախված և մի շարք փոթորկալից հարցերի մխիթարական լուծումը։

Մեր կարծիքով՝ նախ միաբանական ընդհանուր ժողովում պէտք է ընտրել նոր տեղակալ, թէկուզ առանց ընտրելի հինգ՝ նշանակովի. ապա անհրաժեշտ է, որ ծերունի ու անճար Կաթողիկոսը հրաժարական տայ գործերից և յանձնէ իր լիազօրութիւնները ընտրված տեղակալին։ Այնուհետև, կանոն դարձնել, ինչպէս փորձեր եղել են արդէն, բոլոր վանական լուրջ և պատասխանատու պաշտօնները յանձնել միաբանական ընդհանուր ժողովով և տեղակալի նախագահութեամբ ընտրված մասնախմբերին։

Այլև կարևոր է, որ առժամանակ նոր տարբեր, այսինքն՝ ոչ ոքին, չընդունել վանականութեան շարքը, որովհետև ժամանակն է արդէն վանականների թիւը կամաց-կամաց կրճատելու, հասցնելով անհրաժեշտ minimum-ին, 40—30 ի։

Ապա, ի հարկէ, Վեհափառի թոյլատւութեամբ, անել պատշաճ դիմում ուր որ հարկն է ձեռնարկելու համար մօտիկ ապագայում նոր կաթողիկոսի ընտրութեան, մի բան, որը վաղ թէ ուշ պիտի տեղի ունենայ, ուրեմն աւելորդ չի լինի այդ մասին այժմեանից էլ հարկաւոր նախապատրաստութիւնները տեսնելու։

Եւ հասարակութեանը ներկայացնել մանրամասն հրապարակական հաշիւ՝ բոլոր փոփոխութիւնների, գործառնութիւնների և մասնագրութիւնների մասին պարզաբար։

Յովհ. քահ. Աբրահամեանց

Հնչէշ

## ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Նոյեմբերի 8-ին

Բառ չեմ գտնում խորին զզուանքս յայտնելու այն մի որոշ տեսակի մարդկանց, որոնք հայ աշխարհի բոլոր կողմերից բարձրացող հազարաւոր բողոքներն արձանագրող գրչին նոյն գրչով պատասխանելու բարոյական ոյժից զուրկ լինելով, դիմում են վայրենիներին միայն յատուկ կռւելու միակ միջոցին, ֆիզիքական կոպիտ ոյժին... Հրապարակախօսի կեանքին սպառնում են գնդակով վերջ տալ, եթէ նա կը շարունակի գրել Դաշնակցութեան դէմ... Եւ մեր մեծամիտ ազգասէրները կարծում են, թէ լռեցնելով «Մշակ»-ը, կը լռեցնեն և նրանց ձեռքին խաղալիք դարձած հայ հասարակութեանը։ Եթէ դուք իսկապէս ազգի բարեկամն էք և ոչ նրա ձեր անձնական շահերին ծառայեցնողը, ինչո՞ւ, քանի որ կարող էք, չէք աշխատում վերջ տալու այն ցեցերին և գիշատիչ գազաններին, որոնք ցրվելով ձեր «սիրած ազգի» բոլոր անկիւնները, ծծում են նրա արիւնը, կեղեքում, ասպատակում և մաշում են նրան բարոյապէս, նիւթապէս և ֆիզիքապէս։ Դուք այդ լէգէօնի դէմ բողոքի ձայն ծպտուն անգամ չէք հանում, բայց երբ մի լրագիր լսելով այդ բռնակալութեան զոհ ազգի արդար բողոքը, որ անընդհատաբար թափվում է խմբագրատուն, ուզում է հասարակական անաչառ դատաստանին յանձնել այդ բազմաթիւ բողոք-աղերսների մի ամենաչնչին մասն անգամ, «ազգի սրտացաւ բարեկամները» սպառնում էին գնդակահար անել հրապարակախօսին։

Որպիսի ծանր նախատինք և դառն հեգնութիւն մի ազգի հասցէի, որի պաշտպան-խնամատարները օժտված են այսպիսի նեխված զգացմունքներով։

«Մշակի» խմբագրութիւնից խնդրում եմ թոյլ տալ իր թերթի միջոցով յայտնելու այս բողոքը, որը պատկանում է մի քանի գաւառացի ընթերցողների։

Գաւառական

Թիֆլիս, նոյեմբերի 22-ին

Աստրախանից—Սեդրակ քահանայ Աղաբաբեան և Հ. Մելիքեան ուղարկել էին ինձ 20 րուբլի, իրանց անունով պսակ դնելու Արիստակէս սրբազանի դագաղի վրա։ Պսակի համար վճարել եմ 14 րուբլի, իսկ մնացած 6 րուբլին յանձնում եմ խմբագրութեանդ, որ միացնէք այն փողերի հետ, որոնք կը ստացվին սրբազանի մահարձանի համար, կամ ինչ բանի համար որ կորոշեն յանձնաժողովի անդամները։

Ալ. Սահինեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Кавк. Рѣчь» լրագիրը ենթադրաբար ազդարարում է թէ նորակազմ հայկական դեմոկրատական կուսակցութիւնը դժուար թէ օրինականացումն ստանայ, որովհետև նրա ծրագիրը նոյնն է, ինչ որ «Ժողովրդական ազատութեան» կուսակցութեան ծրագիրը։ Հաստատապէս կարող ենք յայտնել, որ այդ լուրը յամենայն դէպս վաղաժամ է, որովհետև նոր կուսակցութիւնը դեռ իր ծրագիրը չէ ներկայացրել։ Կարելի է ասել, թէ որոշ հաւանականութիւն կայ, որ նա ստանայ օրինականացումն։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը հաղորդել է Կովկասի ուսումնական շրջանի կառավարչին, որ այն անձերը, որոնք 1906—1907 թ. ուսումնական տարուայ վերջը ուսուցչական քննութեան են ենթարկվելու առարկաների իրաւունք ձեռք բերելու համար, պէտք է քննութեան ենթարկվեն երկու նոր լեզուներից։ («Кавк.»)

—

Թիֆլիսի գեն.-նահանգապետը դիմել է քաղաքագլխի պաշտօնակատարին առաջարկելով տեղեկութիւն տալ իրան, արդեօք իսկապէս գործակալներին յանձնարարված էր կազմել Պետական Դումայի ընտրողների ցուցակները, նաև հասցնել իրան այն գործակալների ցուցակը, որոնք մասնակից են ցուցակները կազմելու մէջ, մատնանշելով նրանց հասցէները։

—

Ուրբաթ օրերը փոխարքայի պալատում օֆիցէրների համար դասախօսութիւններ է լինելու՝ բուրերի պատերազմի մասին։

—

Նոյեմբերի 21-ին 8-րդ քաղաքամասում ձերբակալել են պօստ-հեռագրատան նախկին ծառայող Ս. Սերգէեվին, որը, ինչպէս յիշում են ընթերցողները, մի քանի ամիս առաջ Թիֆլիսի պօստ-հեռագրատան գրասենեակից սեփականացրել էր 25,000 րուբլուց աւելի փող և մինչև այժմ թաքնվում էր։

—

Նոյեմբերի 22-ին, 9-րդ թաղամասում, Աւճալեան և Բէհուտովսկի փողոցների անկիւնում յարձակում է կատարվել կապալառու Բեգիձէի վրա։ Երեք ամիս առաջ նա վիրաւորվել է 10-րդ թաղամասում և պառկած է եղել իր բնակարանում։ Նրան խնամում էր իր աղջիկը։ Յանկարծ մտել են 2 անյայտ անձինք ատրճանակներով, որով նրանցից մէկը մէկ անգամ պարպել է հիւանդի վրա։ Գնդակը դիպչում է Բեգիձէի ուղղակի ճակատին և մնում է կաշուի մէջ։ Դրանից յետոյ յարձակվողները փախչում են բնակարանից և անյայտանում։

—

Նոյեմբերի 21-ին, գիշերվայ ժամը 1-ին, Սաղախլօ կայարանում խորտակվում է ապրանքային գնացքը։ Մարդկային զոհեր չը կան, միայն մեքենավարը և նրա օգնականը թեթև ջարդուածքներ են ստանում։ Խորտակման տեղի մօտ գնացքների երթևեկութիւնը լինում է փոխափոխ։

—

Նոյեմբերի 20-ին Շուլաւէրում կայացել է Բօրչալուի գաւառի շինական հասարակութեան լիազօրների ընտրութիւնը։ («Т. Л.»)

—

Նոյեմբերի 23-ին խուզարկութիւն է լինում Փունիկուլեօրի մօտ։ Գտնվում են 10 վինտովկաներ և 5000 փամփուշտ։

—

Նոյեմբերի 20-ին, երեկոյեան ժամը 9-ին, 1-ին Զօզօրնի վերելքի վրա, Կեկելաշվիլիի տան մօտ, Զաքար Կեկելաշվիլին (24 տարեկան) իր բնակարանի մօտ ատրճանակով իր կրծքի վրա կրակելով ինքնասպանութիւն է գործել։ Ինքնասպանութեան պատճառը յայտնի չէ։ Դիակը ուղարկված է հիւանդանոցը։

—

Նոյեմբերի 20-ին Գօլօվինսկի պրօսպեկտում բռնել են 4 տարեկան մի վրացուհու, որը անկարող եղաւ յայտնել իր ազգանունը և ցոյց տալ իր բնակարանը, և միայն ասաց, որ իր անունը Նինօ է։ Այդ երեխային տարել է իր բնակարանը խնամելու համար, մինչև պարզվի նրա ով լինելը և գտնվեն նրա ծնողները, Կ. Յարութիւնեանը, որը բնակվում է Պրիկազնի փողոցի վրա № 6։

—

Նոյեմբերի 22-ին 10-րդ քաղաքամասում ձերբակալել են Անդրէյ Կրուտակինին, որը հոկտեմբերի 29-ին 25 բանտարկեալների հետ փախել էր Մետեխի բանտից։

—

Թիֆլիս ժամանեց Թիֆլիսի կայսերական պալատի նոր նշանակված կառավարիչ Օստրօվսկին։

—

Նոյեմբերի 22-ին Մ. Խվեդելիձեի՝ Միքայէլեան և Սաղօվայա փողոցների անկիւնում գտնվող թէյատունը մտել են 4 զինված չարագործներ և վերցնելով գանձարկղում եղող 50 րուբլին, անյայտացել են։

—

Բագուից հաղորդում են, որ ոստիկանութիւնը ձերբակալել է գիւղացի Աբրամ Կօրժէվնիկօվին, որը իր երկու ընկերներով փող է կամեցել կորզել Բալենկօյից «Ռուսաց յեղ. կարմիր դրօշակի» անունից։ Կօրժէնիկօվը յանձնված է պատերազմա-դաշտային դատարանին. գտնված և բանտարկված են այդ գործի մէջ կասկածվող 8 հոգի, որոնք են՝ Սահակեան, Յարութիւնեան, Զուլհակեան, Համբարձումեան, Պետրոսեան, Եաղուբ. Խանդուամ-օղլի և Բուլարեան, որոնց Բագուի գեներալ-նահանգապետութեան սահմաններից աքսորելու համար միջնորդութիւն է յարուցած արդէն։

—

Թելաւից մեզ հաղորդում են, որ սոյն նոյեմբերի 16-ին, Թելաւից 7 վերստ հեռաւորութեան վրա, 4 աւազակների ձեռքով կողոպտվում են Թիֆլիս եկող հանրակառքերի ճանապարհորդները։ Գողացված փողերի գումարը առայժմ պարզված չէ։ Աւազակների ետևից պահակներ են ուղարկված։

—

Գօրու գաւառից մեզ յայտնում են, որ մօտ օրերս, երեկոյեան ժամանակ, ազնուական Գրիգոր Աւսարգիսօվի տան վրա յարձակվում են մօտ 12 աւազակներ, որոնք փող են պահանջում։ Այդ ժամանակ Աւսարգիսօվը սկսում է օգնութիւն կանչել, որի ձայնին շտապում են Փարսադանօվների երկու ծառան և Սկրա կայարանում իբրև պահապան գտնվող մինգրելական գնդի զինուորները, որոնք նկատելով հեծեալ փախչող աւազակներին, սկսում են նրանց ետևից կրակել, որով աւազակներից խոցում են երկու ձի, իսկ երրորդին սպանում են։ Աւազակներին բռնելու համար ձեռք են առնված եռանդուն միջոցներ։

—

Հետևեալ տարուայ սկզբից, լուրերի համեմատ, Թիֆլիսում կազմակերպվում է զինուորական ժողովարան, որի համար նշանակված է Վետցելի տան մէջ մի բնակարան (Միքայէլեան փողոց)։

—

Գօլօվինսկի պրօսպեկտում տուն ունեցող Թայրեանը Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ նահանգապետի կարգադրութեամբ 50 րուբլի տուգանքի է ենթարկված հացատների սեղանների վերաբերեալ կանոնները խախտելու պատճառով։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը նոյեմբերի 11-ին բարոն Կաուլբարսից ստացել է հետևեալ զեկուցումը. «Նոյեմբերի 10-ին երկաթուղային Գօրլովկա կայարանում ամբոխը գործողութեամբ անպատւեց պահակների հրամանատարին, դրա համար էլ պահակները հրացանի կոթերով ցրեցին ամբոխը։ Ժանդարմներից մէկը աշխատում էր կալանաւորել յանցաւորին, բայց ենթարկվեց կրակահարութեան։ Պահակները պատասխանեցին նրանց նոյնպէս կրակելով, որի ժամանակ ամբոխից սպանվել է մէկը, միւսը թեթև վիրաւորվել է ու կալանաւորվել, մնացեալները փախել են։ («Вѣкъ»)

—

Բերլինից տեղեկութիւն է ստացվել, որ Ռուսաստանը բանակցութիւն է վարում գերմանական կառավարութեան հետ Գերմանիայում բնակվող քաղաքական յանցաւորներին ռուսական կառավարութեանը յանձնելու մասին։ Գերմանական կառավարութիւնը պատրաստականութիւն է ցոյց տալիս այդ ցանկութիւնը կատարելու համար։ Կարծում են, որ այդ հարցը շուտով իրական լուծումն կը ստանայ։

(«Вѣкъ»)

—

(«Страна») լրագիրը հաղորդում է, որ Պետերբուրգից, քաղաքապետի արձակած նոյեմբերի 16-ի հրամանի համաձայն, արտաքսվում են արտակարգ պահպանութեան հիման վրա 191 հոգի։

—

Նովօրոսսիյսկի համալսարանի պատգամաւորութիւնը տեսուչ Զանչեվսկու առաջնորդութեամբ Պետերբուրգ է գնացել մինիստրութեան մէջ բացատրութիւններ տալու Օդեսսայում սև հարիւրեակների ձեռքով կատարված ուսանողական ջարդերի առիթով։

—

«Русск. Сл.» լրագրի Պարիզի թղթակիցը հեռագրում է, որ ֆրանսիական լաւատեղեակ շրջաններում լուր է պտտում, որ Պարիզում մի նոր մեծ բանկ է բացվում, որի ղեկավարը պէտք է լինի կոմս Վիտտէն, իսկ գլխաւոր հիմնադիրները լինելու են Մենդելսօն և Բլէյխրեդեր։ Բանկը գլխաւորապէս վաճառելու է ռուսական արժեթղթեր։

—

Լօնդօնից հեռագրում են «Русск. Сл.» լրագրին, որ Պետական Դումայի նախկին անդամ Ալադինը, որ վերջերս գտնվում էր Ֆինլանդիայում, գնացել է Ստոկհօլմ։ Առաջիկայ ընտրութիւնների ժամանակ նա ոչ մի մասնակցութիւն չէ ունենալու, որովհետև նա, Ֆինլանդիայում եղած ժամանակ, իմացել է, որ տեղական ոստիկանութեանը հրամայված է կալանաւորել նրան իբրև Սվէաբօրգի խռովութեան գլխաւոր մասնակցողներից մէկին։

—

Բելգիայում, Լիէժ քաղաքում գտնվող «Վօլգա և Մասս» տեխնիքական-արդիւնաբերական ընկերութիւնը յայտնել է Թիֆլիսի քաղաքային վարչութեան, որ ինքը պատրաստ է գազային զավօդ հիմնել Թիֆլիսում՝ լուսաւորութեան և վառելիքի համար։

—

«Бирж. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ պատշաճաւոր շրջաններում ներկայումս քննվում է ուսուցիչների և վարժուհիների փոխադարձ նպաստամատոյց ընկերութիւնը փակելու հարցը։

—

Գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ Կիևում փակվել է կօշկակարների փոխադարձ օգնութեան ընկերութիւնը։ «Вѣкъ» լրագրի ասելով այդ կարգադրութիւնը պատճառաբանվում է նրանով, որ յիշեալ ընկերութեան անդամների մեծամասնութիւնը հրէաներից է բաղկացած։

—

«Р. В.» լրագիրը հաղորդում է, որ ակադեմիկ Ն. Սօնինին ժողովրդական լուսաւորութեան մինիստրի օգնական նշանակելու հարցը արգելքների է հանդիպել։ Այդ պաշտօնի համար այժմ թեկնածու են համարում կառավարչական սենատի առաջին դեպարտամենտի օբեր-պրօկուրօրի օգնական Բելլեւստինին, որը մինիստր Կաուֆմանի դասընկերն է եղել Ալեքսանդրեան լիցէյում։

—

«Товарищъ» լրագիրը հաղորդում է, որ զինուորական-իրաւաբանական ճեմարանի պրօֆեսոր-գնդապետ Լուկաշևը տպագրել է «Право» լրագրում մի յօդուած ծառայութիւնից խուսափելու համար հրատարակված նոր օրէնքի առիթով։ Արդարադատութեան մինիստրը նկատելով այդ յօդուածի մէջ կրամօլա, հաղորդել է այդ մասին գլխաւոր զինուորական դատախազին։ Դրանից անմիջապէս յետոյ գնդապետ Լուկաշևը հոգեկան հիւանդութիւն է ստացել և մօտ օրերս արձակված է ծառայութիւնից։

—

Մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինը նոյեմբերի 7-ին ստացել է Պերմի նահանգի Կալինսկի գործարանից հետևեալ հեռագիրը. «Խնդրում եմ ձեր գերազանցութեան պաշտպանութիւնը տեղական ոստիկանների յարձակումներից։ Գիշերը ջարդում են դռները, խուժում են տները, կոտորում են, գնդակահարում, մերկ մարդկանց տներից բռնած դուրս են քաշում և կանգնեցնում սառնամանիքի մէջ։ Պաշտօնաթող լէյտենանտ Օլենին»։

(«Р. В.»)

—

Պետերբուրգի քաղաքային դումայի ընտրութիւնները վերջացել են։ Ընտրողների ընդհանուր թիւը եղել է 15,000 հոգի, իսկ ընդամենը ընտրողական թերթիկներ տուել են 3,660, որոնցից պրօգրեսիվ կուսակցութիւնների ներկայացուցիչները ստացել են 1,060 ձայն, դումայի հին անդամները՝ 2,400, «դիֆլինները» և անկախները՝ 200։ Պրօգրեսիվ կուսակցութեան յայտնի թեկնածուներ Կուզմին-Կարավաևը, Արսենիևը, Ֆեդօրով սևացել են։

—

«Рѣчь» լրագիրը լսել է, որ ռուսաց սօցիալիստական կուսակցութեան ղեկավարներից, որոնք գտնվում են Ֆինլանդիայում, Պետերբուրգում տեղեկութիւն է ստացվել, որ այժմ նրանք գտնվում են արտասահմանում։

—

Մօսկվայի հաշտարար դատաւորների խորհրդակցութեանը, որը հրաւիրված է եղել մինիստրների խորհրդի յայտնի շրջաբերականի առիթով կուսակցութիւնների մէջ չը մասնակցելու համար, ներկայ է եղել Մօսկվայի պատւաւոր հաշտարար դատաւոր իշ. Ս. Դ. Ուրուսօվը։ Նրա ներս մտնելու ժամանակ հաւաքված հաշտարար դատաւորները օվացիաներ են սարքում ի պատիւ նրան և առաջարկում են բռնել նախագահական տեղը, և նա համաձայնվում է։ Ժողովը, քննութեան առնելով շրջաբերականը, գտել է, որ հաշտարար դատաւորները ենթարկվում են կառավարչական սենատի 1 դեպարտամենտին, ուստի այդ կարգադրութիւնը նրանք պէտք է ստանան սենատից, այլ ոչ թէ մինիստրների խորհրդի նախագահից։ Ժողովը վճռել է հարցնել սենատի կարծիքը այդ շրջաբերականի ու հարցի մասին։ («Рѣчь»)

—

«Пет. Газ.»-ի ասելով դատարանում և իրաւաբանների մէջ լուր է տարածվել, որ արդարադատութեան մինիստրութիւնը վճռել է փոխել ներկայումս գոյութիւն ունեցող պետական յանցանքների վերաբերեալ գործերի քննութեան կարգը, որտեղ մեծ մասնակցութիւն են ունենում ժանդարմների օֆիցերները։ Ստուգութիւնից յետոյ պարզվեց, որ այդ լուրը ճշմարիտ է։ Արդարև արդարադատութեան մինիստրութիւնը վճռել է պետական յանցանքների վերաբերեալ բոլոր գործերը յանձնել դատաստանական պալատներից նահանգական դատարաններին, տալով նրանց ընդհանուր քննութեան բնաւորութիւն։

—

Բարձրագոյն դպրոցների մի քանի պրօֆեսօրներ և ուսուցիչներ Ստոլիպինի յայտնի շրջաբերականի առիթով, այն է, որ չինովնիկները չը պէտք է պատկանեն որոշ քաղաքական կուսակցութիւնների, գրաւոր յայտարարութիւն են ուղարկել դպրոցների կառավարիչներին, որ նրանք ժողովրդական ազատութեան կուսակցութեան անդամ են և այդ կուսակցութիւնից էլ դուրս գալու դիտաւորութիւն չունեն։ Մօտ օրերս պէտք է քննութեան ենթարկվեն պատշաճաւոր խորհրդակցութեան մէջ այդ յայտարարութիւնները և ապա հարկաւոր բացատրութիւնների ու լրացումների հետ ուղարկվեն մինիստրութիւններին։ («Р. В.»)

—

Նոյեմբերի 9-ին Մօսկվայից Վօրօնեժ էր գնացել Վ. Վ. Պրժեվալսկին, որը պէտք է դասախօսէր ժամանակակից քաղաքական դրութեան մասին։ Ի նկատի առնելով որ ադմինիստրացիան մերժեց կուսակցութեանը ժողով գումարելը, Վ. Վ. Պրժեվալսկին և Վ. Ի. Կօլիւբակինը գնացին նահանգապետի մօտ, ցանկանալով իմանալ մերժման պատճառը։ Նահանգապետը յայտնել է նրանց, որ սահմանադրական-ռամկավարական կուսակցութիւնը յեղափոխական է ճանաչված և ուստի նա չի թոյլատրի ժողով գումարել. իսկ եթէ կը փորձեն ժողով գումարել առանց թոյլտուութեան, այդ դէպքում յանցաւորները կը պատժվեն ադմինիստրատիվ կարգով։ («Вор. Сл.»)

—

Պետերբուրգում գտնվող էստօնական գաղթավայրի բազմաթիւ ներկայացուցիչները որոշեցին Պետական Դումայի ընտրութիւններին ձայն տալ սահմանադիր-ռամկավարական կուսակցութեան թեկնածուներին։

(«Рус. Вѣд.»)

—

Մօսկվայի ազնուական Լեսլին մի ինչ որ դատ ունենալով Ժամհարեանների բանկային տան հետ, արժեթղթերի հաշիւների վերաբերմամբ, առաջարկել է քաղաքագլխին և քաղաքային վարչութեանը 35,000 րուբլի նուիրել զինուորականների որբերի տան համար, եթէ որ քաղաքը կարողանայ տանել այդ գործը Ժամհարեաններից։ Պէտք է նկատել, որ պ. Լեսլին մի այդպիսի առաջարկութեամբ արդէն դիմել էր Մօսկվայի ազնուականութեանը, բայց վերջինս միանգամայն անընդունելի է գտել։ Հաւանականօրէն նոյնպէս կը վարվի և քաղաքը։ («Вѣкъ»)

—

Կազանի, Սամարայի և Սիմբիրսկի և այլ նահանգներում գիւղացիները ուտում են միայն գետնախնձոր, որովհետև հաց վաղուց չը կայ։ «Կարիքը այնքան մեծ է—գրում են «Сегодня» լրագրին—որ գիւղացիները իրանց անասունները վաճառում են համարեա ձրի, որովհետև ձեր ասած բանը չը կայ... Այսպէս, օրինակ, մի այծ կարելի է ձեռք բերել 30—50 կօպէկով։ Սովի հետ զուգընթացաբար խեղճ գիւղացուն սպառնում են մօլեգին-տիֆը, լընդացաւը (цыга), խոլերուկը և այլ վարակիչ հիւանդութիւնները»։ Տօբօլեան նահանգի Սուրգուտսկի գաւառից նոյն լրագրին գրում են, որ ազգաբնակութեան կարիքը այնչափ սաստկալի է, որ առանց կեղտոտ կոճղեխի բոյսի ցորեն անկարելի է ձեռք բերել։ Օգնութիւն և հաց ոչ մի տեղից չը կայ։

—

ԲԱԹՈՒՄԻՑ, մեզ գրում են նոյեմբ. 21-ին։ Վերջերս Բաթումի գործադուլ բանուորների վրա աւելացան 100—150-ի չափ բանուորներ ևս. բոլորն էլ գրեթէ գերդաստանի տէր մարդիկ են, որոնց դրութիւնը շատ անմխիթար պիտի լինի ձմեռվայ այս դաժան օրերում. Թշուառութիւնը համարեա համահաւասար չափեր է ընդունել. ոչ մէկի երեսին ուրախութեան ոչ մի ժպիտ. աշխատաւոր դասակարգի այս անելանելի դրութիւնը կարող է նրանց համար մի աննորմալ ճանապարհ բաց անել և անբարոյականացման աստիճանին հասցնել։ Անցեալ տարի, խոշոր ֆիրմաների գործարանների փակումից յետոյ, մեզանում բացվեցին մի քանի թիթեղեայ արկղներ պատրաստող փոքրիկ գործարաններ. ի միջի այլոց այդպիսի մի գործարան բաց արեց Բաթումի հասարակութեան ծանօթ հրէայ Վ. Կապլանը, որը կանոնաւորապէս շարունակում էր իր գործը մինչև օրս։ Կապլանի բանուորները ստանում էին կանոնաւոր օրավարձ, և աշխատում էին որոշեալ ժամերով և կարելի է ասել աւելի կրճատված։ Բանուորները, որ կազմված էին միւս մեծ գործարանների բանուորներից—հայ, վրացի, ռուս, հրէայ, ասորի, և այլն, բոլորն էլ վկայում էին, որ Կապլանը աւելի մտերիմ և վարձատրող է իր բանուորներին քան մեծ գործարանատէրերը, բայց դժբախտաբար վերջերս յոյն Սիմիրիդի արած մրցումից յետոյ Կապլանը անկարող եղաւ շարունակել իր գործը, տալով իւրաքանչիւրին վեց-ական րուբլի, բազմաթիւ գործադուլ բանուորների վրա աւելացնելով 150-ի չափ բանուորներ ևս, փակված յայտարարելով իր գործարանը։ Ահա թէ շահագործող կապիտալիստի ֆասոնը որտեղից է հասնում թշուառ բանուորին. մեզ համար ակներև է, և եթէ չը լինէր յոյն սիմիրիդի կօնկուրենցիան, և եթէ նա չը պարզէր իր արջի թաթերը և չը սպառնար այդ փոքրիկ գործարանի գոյութեան խախտման, շատ հաւանական է որ գործարանը կը շարունակէր իր գործը, և որ այսօր այդքան բանւորներ դարձեալ անգործունէութեան մատնված չէին լինի, այն էլ այսպիսի ձախորդ օրերում։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՍՈՒԼԹԱՆԸ ՀԻՒԱՆԴ

Հակառակ Պօլսոյ պաշտօնական շրջանակներու տեղեկութեանց, Եւրոպայի լուրջ օրագիրները կը հաստատեն և կը վաւերացնեն Սուլթանի հիւանդութիւնը։ Ֆրանսայի Le Temps-ը՝ մէկ հեռագրական լրով՝ բոլորովին ստուգեց հայյակեր Սուլթանին մօտալուտ մահը։ Այսօր (հոկտ. 26 Ն. Տ.) իտալական ամենէն հեղինակաւոր օրագիրը Gorriere della Sera իր յատուկ թղթակցի յետագայ նամակովը անժխտելիօրէն կապահովցնէ մեծ մարդասպանին հիւանդութեան մանրամասն ճշգրիտ լուրերն։ «Քանի որ—կը գրէ թղթակիցը—կը շարունակուի խօսուիլ Սուլթանին հիւանդութեան և հաւանականօրէն անոր դեռ որչափ ատեն ապրելուն վրայ, լաւ է ամենայն ինչ ստուգել, պատմելով ճշգրտութեամբ այն ամեն բան, զոր լսած ենք, և որոնք իրաւ ստոյգ են։

Սուլթանը իրօք հիւանդ է, երիկամանց և փամփուշտի ծանր հիւանդութեամբ, իսկ քաղցկեղ (cancro) բացարձակապէս չունի։

Բայց ինչպէս որ հոս մեծամեծ անձնաւորութեանց համար սովորութիւն կայ ծածկել անոնց հիւանդութիւնը որով կը տառապին։ Սուլթանին հիւանդութիւնն ալ ծածուկ պահուեցաւ—նոյն իսկ իր մտերիմներէն—մինչև երկու ամիս. երբ ան չը կրցաւ «Սէլամլըք»-ի երթալ՝ բռնուելով միզարիւնութեամբ (uremia) և միզարգելութեան ծանր տագնապէն։

Իր սովորական բժիշկը, Իբրահիմ փաշա, իր օգնականին աջակցութեամբ, ջանաց դարման տանել հիւանդութեանը, բայց չը յաջողեցաւ, կանչեց այն ատեն ուրիշ բժիշկ մը—միշտ Թուրք—պետական Բէնան պէյ, որ աւելի կրցաւ Սուլթանին ցաւերը բուժել։ Ի վարձատրութիւն, պետականը զօրաբաժնի զօրավարական բարձր աստիճանին հասաւ!

Այլ սակայն Սուլթանի հիւանդութեան լուրը փայլակի պէս տարածուած էր. ուստի Իբրահիմ փաշայի խորհրդին համաձայն, Աբդիւլ Համիդ կորոշէ Բէրլինէն բերել տալ հռչակաւոր պրօֆեսօր Բէրկմանն, որ հոս հասաւ, միասին բերելով իր օգնականը պրօֆ. Բիռ։

Արդ կրնամ ձեզ ապահովցնել ամենաստոյգ կերպով, որ պրօֆ. Բէրկմանն Սուլթանին երբեք այցելութիւն չը տուաւ, զի բնաւ անոր հետ չը խօսեցաւ, վասն զի Աբդիւլ Համիդ կը վախնէ երկու կամ երեք անձանց, որ շարունակ իր քովը կը կենան։ Գալով եւրոպական գիտութեանց, ինքը անոնց անտարբեր է։

Դարմանատար բժիշկները Սուլթանին հիւանդութեան վրայ մանրամասն տեղեկութիւն կուտան պրօֆ. Բէրկմանին. ասի կը տարրալուծէ մէզը քանի մ'անգամ, և վերջապէս կը պատրաստէ գրաւոր տեղեկագիր մը, զոր կը յանձնեն Սուլթանին։ Բէրկմանն մեկնելուն հոս թողուց իր օգնականը Բիռ, իբրև խորհրդատու Սուլթանի բժիշկներուն!

Աբդիւլ Համիդ կը դիմէ փորձառական դարմաններու, առանց նոյն իսկ իմացնելու իր բժիշկներուն։ Ասոր փորձը մի քանի օր է որ տեղի ունեցաւ, այսպէս. պալատին դեղագործը՝ Բէքիր էֆէնդի՝ Սուլթանին խառնեց խաշոյ կամ սպեղանի մը, որ անոր ցաւերը բաւական մեղմացոյց, և ասոր վրա պաշտօնական լրագիրներու մէջ կարդացուեցաւ, ու Պէքիր էֆէնտի մեծարուած էր Օսմանիէի մեծ շքանշանով և ադամանդակուռ պատուանշանով, յար և նման, ինչպէս Գերմանիոյ կայսրը! Այս լուրերը այլևս ամենուն ծանօթ են։ Տարակոյս չը կայ սակայն, որ Աբդիւլ Համիդ շատ ուժաթափ է՝ տկարութեանը առթած ցաւերուն պատճառաւ։

Ուրիշ բան չի գիտցուիր, և ոչ ալ կարելի է գիտնալ. մէջտեղը կեղծիքները առ այժմ կը պտտին. ամեն մարդ իր կարծիքը կուզէ ըսել, բայց ով որ ծանօթ է տեղւոյս, գիտէ ստոյգ որ ինչ-ինչ բաներ Եըլտըզին դուռնէն դուրս չեն ելլեր...։

Սուլթանը սակայն կը պարապի իր գործերուն, և քանի մը օր է որ հանդիսական ունկնդրութեան ընդունեցաւ Միացեալ Նահանգի մինիստր Լիշմէն որ իրեն ներկայացուց դեսպանական իր նոր վկայութիւնները։

Ահաւասիկ Ամերիկայի ուրիշ մէկ յաղթական քայլը. վաղուց ի վեր է որ Միացեալ Նահանգի խնդրանքը, թէ իր ներկայացուցիչը Պօլսոյ մէջ դեսպանութեան բարձրանայ, նախ սաստիկ հակառակութիւն կրեց Թուրքիայէն և յաջորդաբար Եւրոպիոյ տէրութիւններէն։

Խնդիրը որ տարիէ մ'ի վեր կը քաշքշուէր տեղեկութիւններով և հակատեղեկութիւններով, իր լուծումը ունեցաւ Սուլթանին՝ Պ. Լիշմէնը հանդիսաւորապէս ընդունելովը։

Շատ մը երևակայեալ բաներ կըսուին Թուրքիոյ գահուն յաջորդողին համար և հաւանական յաջորդներուն վրայ։

Իրը այս է որ Թուրքիոյ մէջ յաջորդութիւնը կիյնայ ընտանիքին ամենէն տարեցին, որ կրնայ ըլլալ հօրեղբայր, հօրեղբօրորդի կամ թոռն Սուլթանին, խնդիր չի վերցըներ։

Արդ այն որ այս հանգամանքներուն մէջ կը գտնուի, է Սուլթանին եղբայրը—Րէշադ էֆէնդին։

Ասի ամենախիստ հսկողութեան տակ կապրի, կամ լաւ ևս ըսելով կատարելապէս տարագրեալի մը դիրքի մէջն է։ Ոչ մէկուն կերևնայ, ոչ ոք կրնայ մօտենալ իր պալատին, ոչ մէկ Եւրոպացիի հետ յարաբերութիւն ունի, և ոչ մէկ Թուրք կրնայ անոր խօսք մը ըսել, վախէն որ իսկոյն կրնայ ձերբակալուիլ։

Անհաւատալի բաներ են, բայց ստոյգ. այսու հանդերձ ամեն գաղափարական Թուրք կը հաւատայ որ եթէ ան յաջորդէ, պիտի ջնջէ այժմեան տիրապետող սոսկալի դրութիւնը—վասն զի ինքը անոր խիստ փորձը ունի—և ամբողջ օսմանցիներուն անձնական ազատութիւն պիտի տայ, բան մը որ այժմ Թուրքիոյ մէջ գոյութիւն չունի։ Եւ կան շատ մը ծեր Թուրքեր որ Րէշադ էֆէնտին կը ճանչնան, դեռ ան չբանտուած։ և զանի կը նկարագրեն հեզ և յառաջդիմութեան նախանձախնդիր։ Այս բարեխօս յոյսերու սակայն՝ կրնայ խոչընդոտ ընդունիլ, որ Րէշադ էֆէնդին արդէն իսկ 60 տարեկան է, թէ վերը նկարագրուած իր կեանքը մթագնած է իր միտքը, և այս պայմաններուն մէջ, իրմէ բարենորոգումներ և յառաջդիմութիւններ քիչ կը յուսացուին։

Աբդիւլ Համիդ կուզէ իրեն յաջորդ կարգել իր զաւկըներէն ամենէն սիրածը՝ Բիւրհանէդդինը, որ նոյնպէս կղզիացեալ կը պահուի և տոգորուած է իր հօրը գաղափարներով, և քաղաքականօրէն բարեկամ Գերմանիոյն, և ինքը կը կարծէ թէ միմիայն բարեկամ Թուրքիոյ՝ Գերմանիան է։ Գերմանիան Սուլթանին այս փափաքը առաջ կուզէ մղել տալ. սակայն իրեն մեծ արգելք է Անգլիան։ Սուլթանը իր իղձերուն չի կրնար դիւրաւ հասնիլ, քանի որ ատով իսլամի օրէնքը բռնաբարած կը համարուի և Սուլթանը ինքնին գիտէ որ այդ օրինազանցութիւնը մեծ խռովութիւն յառաջ կը բերէ, և այս պատճառաւ յաջորդի մասին ոևիցէ լուր հաստատութիւն չունին։

(«Արմենիա»)

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

22 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 նոյեմբերի։ Քննելով հրէական հարցը խաղաղ վերածնութեան կուսակցութեան կենտրոնական կոմիտէտը, ընդունեց, որովհետև կուսակցութեան ծրագիրը ընդունում է բոլոր ազգութիւնների լիակատար համահաւասարութիւնը, ուրեմն անկասկած է, որ կուսակցութիւնը ընդունում է և հրէաների իրաւունքների հաւասարութիւնը, և ուստի որևէ առանձին որոշում այդ հարցի առիթով չէ պահանջվում։ Ի հերքումն լրագիրների այն լուրերի, որ իբր Ստախովիչի՝ հոկտեմբ. 17-ի դաշնակցութիւնից դուրս գալը պէտք է հետևանք համարել այն ճնշման, որ նրա վրա գործադրեց խաղաղ վերածնութեան կուսակցութեան Մօսկվայի կոմիտէտը, յայտնում է, որ յիշեալ հարցը առաջին անգամ քննել է նոյեմբերի 21-ին կենտրոնական կոմիտէտը հէնց իր, Ստախովիչի ներկայութեամբ։ Ստախովիչը հնազանդվեց կոմիտէտի վճռին և հոկտեմբերի 17-ի դաշնակցութեան կոմիտէտին ներկայացրեց իր հրաժարականի ծանուցագիրը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 22 նոյեմբերի։ Հաագայի կոնֆերենցիայի հարցի առիթով Ռուզվելտն ասել է. «Անցեալ տարի, Ռուսաստանի ղեկավարութեամբ, նախնական պատրաստութիւնը տեսնվեց. Նոր-Աշխարհի բոլոր հանրապետութիւններն էլ առաջին հրաւէրը ստացան մասնակցելու։ Ռուսաստանի և Նիդէրլանդիայի բարձր գնահատելի քաղաքավարութիւնը և նախաձեռնութիւնը հնարաւորութիւն տուին գումարել Նոր-Աշխարհի հանրապետութիւնների կոնֆերենցիան օգոստոս ամսին, հէնց երբ Հաագայի կոնֆերենցիայի գումարումն էր սպասվում։ Հաագայի կոնֆերենցիայի գործադրելի ծրագիրը ուղարկել է ռուս կառավարութիւնը, իսկ մենք ուսումնասիրում ենք։ Նաւատորմիղը հարկաւոր չէ ուժեղացնել, հարկաւոր է միայն հին ձևի նաւերը նորերով փոխարինել։ Ինչ վերաբերում է զօրքին, պէտք է հիմնել զինուորական դպրոցներ, մարմնամարզական ընկերութիւններ և զինուորական ակումբներ։ Իւրաքանչիւր քաղաքացի պէտք է միաժամանակ լաւ ուսեալ զինուոր լինի։ Զինուորի և քաղաքացու օրինակը տալիս է փոքրիկ Շվէյցարիան։

23 նոյեմբերի

ՏՕԿԻՕ, 22 նոյեմբերի։ Անգլիական և ճապօնական խոշոր կապիտալիստների մի խումբ այստեղ հիմնել է անգլօ-ճապօնական բանկ, որի կանոնադրութիւնը երէկ հաստատվեց։

ՄԱԴՐԻԴ, 22 նոյեմբերի։ Ծովապետ Ֆուշարը ներկայացաւ թագաւորին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 նոյեմբերի։ Այսօր, առաւօտեան ժամը 11-ին զինուորա-ծովային դատարանի առանձին մարմինը ձեռնարկեց քննելու 1905 թ. մայիսի 15-ին ճապօնական ծովում էսկադրան թշնամու ձեռքը յանձնելու գործը։ Մեղադրվում են 78 հոգի, որոնք բաժանված են 3 կաթէգօրիաների. գլխաւոր մեղապարտներն են. էսկադրայի նախկին հրամանատար Նեբօգատօվը և Սմիրնօվ, Գրիգօրևը, Լիշինը և Շվէդէ զրահանաւերի հրամանատարները։ Բոլորն էլ մեղադրվում են պատիժների վերաբերեալ զինուորա-ծովային կանոնադրութեան 279 յօդուածով։ Պաշտպանում են երդուեալ-հաւատարմատարներ՝ Բազունով, Կարաբչևսկի, Կվաշին-Սամարին, Սերտլանով, Ճապօնիայի նախկին հիւպատոս, Պիլենկոն և այլն, ընդամենը 22 հոգի։ Գործավարութիւնը կը տևէ 2—3 շաբաթ։—Նոյեմբերի 21-ին Վիբօրգի րայօնի բանուորական միտինգը երկար վիճաբանութիւններից յետոյ որոշել է չը յարվել քաղաքական կուսակցութիւններին Դումայի ընտրութիւնների ժամանակ, որի մասին տեղեկացրել է րայօնական կազմակերպութիւններին, խնդրելով դադարեցնել ժվող ագիտացիան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 նոյեմբերի։ Թագաւոր կայսրը բուխարական էմիրին շնորհել է Անդրեյ Նախակոչի կայսերական շքանշանը։ Էմիրը իր կողմից Թագուհի կայսրուհուն մատուցել է բուխարական բարձր շքանշանը։

ՄՕՍԿՎԱ, 22 նոյեմբերի։ Կայացաւ «Русск. Мысль»-ի խմբագիր Գոլցևի հանդիսաւոր թաղումը։ Դագաղի վրա դրված էին բազմաթիւ պսակներ։ Ամսաթերթի աշխատակիցները նրա յիշատակը անմահացնում են գրադարան հիմնելով հանգուցեալի անունով ռուսաց մուզէում։ Թերևս ամսաթերթը չը դադարէ։

ԱՍԽԱԲԱԴ, 22 նոյեմբերի։ Ղզըլ-Արվաթում սպանվել է մի թաղային վերակացու։ Չարագործները փորձել են սպանել նաև ոստիկանապետ կապիտան Սէլնիկովին։

ՄՕՍԿՎԱ, 22 նոյեմբերի։ Հոկտեմբերի 17-ի գիւղացիական կուսակցութիւնը վաւերացրած է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերի
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎՍԿԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և ներվային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ի. Կ. ԳԶԵԼԻՆՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՀԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՁԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ե. Գուրգենով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8։ Կանանց համար 12—1 ժամը։
Սօլօլակ, անկիւն Բեհբութեան և Պասկեվիչի փողոցների,, № 33/15։
(ա. օ.) 61—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Գ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ. երեկոյեան 6—7 ժ.
Տէլէֆօն № 1087
Սօլօլակ, Լերմոնտովսկայա փող., 16.
(ա. օ.) 61—150

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Կ. ԿԷՕՆՃԵԱՆ
Արտասահման մեկնելու պատճառով
ԸՆԴՀԱՏՈՒՄ Է
հիւանդների ընդունելութիւնը։ 2—3

Լոյս տեսաւ և վաճառվում են
Ե. ԹՈՓՃԵԱՆԻ
ԼՈՅՍ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ—(պատի 50 կոպ., գրպանի—20 կոպ.)—բոլորովին նոր բովանդակութեամբ։
Պատի օրացոյցի տախտակը—մի քանի գոյներով տպած «Մայր Հայաստանի» պատմական պատկերը և գիւղացի ու բանւոր աշխատաւորների էմբլեմները։
Գումարով գնողները թող այժմեանից դիմեն Тифлисъ, Мадатовская № 5, Е. Топчяну, կամ «ՓԱՐՈՍ» գրախանութ, Երևանեան հրապարակ, Նիկ. Մատինեանին։
4—5

ՄԻ ՈՒՍԱՆՈՂ
ցանկանում է
ԴԱՍԵՐ ՈՒՆԵՆԱԼ
Հասցէն՝ «Մշակի» խմբագրատուն։
(ե. հ. կ.) 3—5

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. Շերմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երևանեան հրապարակ, տ. Գուրգէնովի № 7. պօդեզ նոտար Մղերովի։
(ե.հ.շ.) 80—100

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնէ
ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ
„ՌՈՒՍ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ“
Աշխատութեան երկրորդ հատոր
ԿՈԼՑՕՎ, ՆԵԿՐԱՍՕՎ, ՆԻԿԻՏԻՆ և ՊԼԵՇՉԷԵՎ
Բանաստեղծների պատկերներով
Դիմել՝ Москва, Тверская, меблир. ком. «Флора, Александру Цатуріану.
4—5

Լոյս է տեսել և վաճառվում է
Ա. ԳԱԼՍՏԵԱՆՑԻ
„Կիրակնօրեայ դպրոցներ“
Ձեռնարկ ուսուցիչների համար
Գինն է 50 կոպ.
Զուտ արդիւնքը յօգուտ Անիի ուսումնասիրութեան գործին։
Դիմել՝ Баку, Мореход. училище дальн. плаванія А. Галустянцу, կամ Բագուի հայ գրավաճառներին և Թիֆլիս՝ «Գուտտենբերգ» գրախանութին։ 7—15

ՄԵՇԵՐԻՆՍԿ-ՊՕԴՎՕՐ
Մօսկվա իլինկայում
Նոր կահաւորված 120 համարից էլեկտրական լուսաւորութիւնով նոր մեքենայ բարձրանալու,
ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ,
Ամենայն յարմարութիւններով։
չ. ու. 2—8

ՓՈՐՁՎԱԾ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ
Պատրաստում է աշակերտներ ու աշակերտուհիներ բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Ընդունում է նաև ռեպետիրովկա։ Հասցէն «Մշակի» խմբագրատանը։
(ա. օ.) 9—10

ԲԱՑՎԱԾ ԵՆ
ԿԱՀԱՒՈՐՎԱԾ
ՍԵՆԵԱԿՆԵՐ
„ՊԱԼԷ-ՐՕՅԱԼ“
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Քաղաքի կենտրոնում, Դվորցովայա փողոցի վրա, Նոր տուն Սարաջևի, նոր նորոգած, լաւ կահաւորված և լուսաւորվում է էլեկտրականութիւնով։
Գինը 75 կոպէկից մինչև 6 րուբլի օրական։
9—10

ԱՅՍ ՕՐԵՐՍ ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„АРМЯНСКАЯ МУЗА“
Сборникъ, изданный подъ редакціей Ю. Веселовскаго и проф. Г. Халатянца при участіи русскихъ поэтовъ.
МОСКВА, 1907, ЦѢНА 1 Р.
СКЛАДЪ изд. Москва, Б. Каменн. мостъ, д. Куракиныхъ, кв. 40 Ю. Веселовскаго.—ВЪ ТИФЛИСѢ можно получать: у «Гуттенберга» (Галустяна) и въ Цент. кн. торговлѣ.
(ու ե) 4—6

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36
(կ.չ.ու.) 27—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպեկտի և Կոջեւսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կոջեւսկի փողոցից № 2.
(ա. օ.) 281—300

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Բազմամեայ ընկերութիւն, որ զբաղվում է կեանքի դժբախտ դէպքերի ապահովագրութեամբ
Եկամուտների եւ դրամագլուխների ապահովագրութեան
ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Հիմնված 1835 թուին
Ընդունում է ապահովագրութիւններ ամենազանազանակերպ պայմանների և դրութիւնների, աննշան գումարներից մինչև 200,000 ր. մի անձի վրա։ Ապահովագրողների մասնակցութիւն ընկերութեան գործերում և եկամուտներում, ապահովագրական վկայականների պայմանաժամի յարատևութիւն։ Ապահովագրական գումարների վճարում, ինքնասպանութեան դէպքում։ Ճանապարհորդութիւնների անսահմանափակ իրաւունք։ Ապահովագրութեան դադարեցման, գրաւ դնելու և աւարտման ժամանակ ամենաշահաւէտ պայմաններ։
Պահեստի և այլ դրամագլուխներ 38,000,000 րուբլու.
Մանրամասն տեղեկութիւններ, ընկերութեան կանոնադրութիւնները և հաշիւները, ինչպէս և ընդունելութեան ցուցակները, յայտարարութիւնները և այլն, կարելի է ստանալ ձրի
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ
Тифлисъ. Барятинская ул., № 6, телефонъ № 415։
3—30 Գլխաւոր ներկայացուցիչ՝ Բ. Գ. Կրասնեանսկի

1887 Ի. ՏԱՐԻ 1907
„ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ“
ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԸ
Կը մտնէ իր գոյութեան քսաներորդ տարեշրջանը, և կը շարունակուի իր ծանօթ ուղղութեամբն և ծրագրով։ «Հանդէս Ամսօրեայ» իբրև Հայագիտութեան հանդէս՝ պիտի բովանդակէ հայ գրականութեան, մատենագրութեան, բանասիրութեան, լեզուաբանութեան, հնախօսութեան, աշխարհագրութեան, պատմութեան վերաբերեալ քննադատական ուսումնասիրութիւններ—ինքնագիր և թարգմանածոյ։ Զանց պիտի չառնուին հայ ականաւոր ու գրագէտ անձնաւորութեանց կենսագրութիւններ։ Նոյնպէս քննադատական տեղեկութիւն պիտի տրուի ազգային կարևոր գրքերու, նոր հրատարակութեանց են։—Տարեկան բաժնեգինն է 10 ֆր.= 4 րուբ.—կանխիկ։
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷՆ
A la Rédaction de la Revue Handess Vienne (Autriche) VII/2 Mechitharistengasse 4

Տպարան «ՀԷՐՄԷՍ» ընկ.
Электропечатная, Типографскаго Т—ва «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 5